

# ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀԱՆԴԻՍ ԱՁԳԱՑԻՆ, ԳԻԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ

## ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԸ

Տիպուա սը Մոնթելո ճամբորդը սրտառուզ պատմութիւն մը կը յիշէ իր գրեթէ մէջ, որ 1839ին հրատարակուած է.

Երբոր հայկական նոր գաղութներ թիւրքիայէն եկան հաստատուելու Սևանի լճին շրջակաները, «Դիպուածը այնպէս բերաւ որ նորեկ ընտանիքներէն մին տեղափոխուի այս հին եկեղեցիներէն մէկուն մօտ: Ասոնց հետ էր նաև ալեւոր ձերուծի մը, որ հասած վայրկեանէն, արտասովոր այլաբանութեան մը նշանները ցոյց տուաւ: Եկեղեցիին շրջա բոլորը կը դառնար ու դառնար, մէջ մը այս կողմ նայելով, մէջ մը այն կողմ: Միւս Հայերը, շատ զարմացած, իրեն հարցուցին թէ ի՞նչ կար որ զինքը այդպէս կը խռովէր. «Ինձի կը թուի թէ, ըսաւ ձերուծին, ես կը ճանչնամ այս եկեղեցին. դասին մէջ այս ինչ այն ինչ բանը կայ որ զեռ հոս բլլալու է եւ զոր ատենօք զիտած եմ: Տարակոյս չունիմ որ հոս էր որ կուզայի խաղալ աղայութեանս, երբ թիւրքերը եկան մեզի ամբողջ ընտանիքով զերի տարին: Տեսէ՛ք, կը ճանչնամ սա բանը, նա բանը:» Վերջապէս իրերը այնքան լաւ ճշգրտեց որ, ա՛յ տարակոյս չմնաց թէ այդ եկեղեցին ճիշդ իր զիւղինն էր, ուսկից ատեր տարեր էին զինքը ութ ինը տարուան հասակին, և ուր բազմը այդպէս յեղակարծօրէն կը վերադարձնէր զինքը՝ իր օրերը աւարտելու:»

Մտքիս մէջ կը սիրեմ շինել հիմա սրտի ու հոգիի վիճակը, որ այդ ձերուծիինը եղաւ իր ամբողջ կեանքին մէջ, իր հայրենի հողէն հեռօք Օր մը, խուճապի ու պակուցման օր մը, հայրն ու մայրը եկեր խելայեղ ատեր տղերի էին զինքը եկեղեցիին բակէն ուր կը խաղար իր հասակակիցներուն հետ, ու հե ի հե ծրարուած կապոցներու տակ կըցելով՝ ամենքը մէկէն, զիւղին բոլոր բնակիչներով, ճամբայ ինկեր էին, օրերով ու օրերով քալելով, աղբիւրի մը քով հազիւ կանգ առնելով՝ չորաբեկ պատառ մը կու տալու համար ախուլախներու մէջ, ու այսպէս գացեր էին դէպի առաջ միշտ, անձանօթ

դաշտերէ, լեռներէ ու ջրերէ անցնելով, սոսկումէն արտահալած, իրենց ետէն եկող Ալլազգիներուն հրոսնորէն վտարական՝ սրոնց անունը իր մեծերը զօգտալով կ'արտաբերէին մատերնին բերաննուն վրայ:

Տեղութենէ մը յետոյ զոր չէր կրնար յիշել, օր մը վերջապէս ինկեր, տախտապարներ էին տեղ մը, ու ա՛յ հոն մնացեր էին: Տարիները եկեր անցեր էին, մանուկը կտրիճ էր եղեր, նոր հայրենիք մը ստեղծեր էր իրեն՝ իրեններուն հետ գատելով տաժաննելով, սիրեր ու ամուսնացեր էր, ու զաւակներու տէր էր եղեր: Կեանքը իրեն և իրեններուն բաշխեր էր իր ցաւերն ու հրճուանքները, անոնց յարանորոգ ու յարահողով դարձադարձին մէջ հետզհետէ կորսուելով յիշատակները զոր շակեր հետերնին էին բերեր: Անունները աւրուեր էին, տպաւորութիւնները եղծուեր, շրջագծերն անյայտացեր: Հետզհետէ հասնողները, որ իրենց ինկած նախորդներուն տեղը կ'ուզային բռնել, անցեալէն բան մը չէին գիտեր բայց եթէ հեռուի մշուշին մէջ կորսուած սասանմունք մը որ իրենց հայրերը առեր նետեր էր հողին վրայ ուր կ'ապրէին հիմա, և ուր օրուան ցաւերը կը բաւէին՝ ժամանակ չթողու համար դառնալու իրենց նախորդներուն կրած տառապանքներուն:

Ինքն անոնցմէ էր սակայն որ չեն մոռնար: Տարիները որքան անցան կուզային կընէ իր հաճակը, Յիշատակը այնքան անջի կը շտկուէր կը կանգնէր իր մարտն մէջ: Ժամանակը որ իր կենդանութիւնը կը մարեր քիչ քիչ, Անցեալին կուտար վերընձիւղիլ իր էութեանը խորը, առոյգ և ուռճալիւր: Անով կ'ապրէր ա՛յ, անոր կրթունամ: Ո՛վ հեռուոր քաղցրութիւնը հայրենի հողին որ իր մանկութիւնը տեսաւ, որուն մարդերուն մէջ կը տապալակէր, ըլլուներն ի վեր կը մազլէր, և որուն եկեղեցիին դժբախտ լեռան բարձունքէն՝ իր ետէն կը նայեր մտերմօրէն, իր վրայ կը հակէր հողմած Յղբայրութեամբ մը՝ որչափ հեռու որ կը տանէին զինքը իր պոզպատէ ճապուկ սրունքները:

Օր մը յանկարծ եկեր իրեն ըսեր էին թէ պէտք էր մեկնիլ, պէտք էր երթալ նոր հայրենիք մը փնտռել ուր կեանքը նուազ ծանր ըլլար իրենց կոշկոճուած ուսերուն: Այս անգամ իր կարգին, դէպի հարը ծոած ձերուծի, դացեք իր թոնիկի վրէժներէն բռներ էր, ու այս-

պէս ճամբայ ինկեր էին ամենքն ալ, օրերով ու օրերով քաշելով, մինչև որ տեղ մը ինկեր էին ուժասպառ, ա՛լ հոն մնալու համար:

Ան ինչ ուրախութիւն եղաւ ծերունիինը երբոր այդ հողին վրայ, ուր եկած էր իր տրտմութեան օրերը վերջացնելու, իր Հայրենիքը գտաւ, ան որուն ետեւէն հառաչեր էր ամբողջ կեանքին մէջ, ուսկից իր սիրտը չէր բաժնուեր երբեք: Ահա՛ դաշտին ոլորուն հեռանկարը հորիզոնին վրայ, ահա՛ բլուրները, ահա՛ ջրին ընթացքը ծմակներու մէջէ, ահա կածանը որ դէպի լեռը կ'ընթանայ հետակորոյս, ահա՛ վաղնջուց եկեղեցին՝ յաղթ կաղնիին ըսիւ ի վեր:

Ծոնցաւ հողը պօքաւ, իր արցունքէ այրի աչքերը հիմակ թաց, թեւերը բացաւ, դէպի վեր ուղղեց, ու Սիմէոնի պէս կրցաւ ըսել.

«Ա՛լ հիմա՛ ո՛վ Տէր՛ արձակե՛ս ըս ծառադ իս զազունութիւնով:»



Կ'ուզեմ հաւատալ թէ այդպէս ծերունի մը կայ մեր ամենուս հողին խորը, որ վտարանդի գաւակներն ենք այսօր հեռու հայրենիքի մը:

Նոյն Այլազգիներուն առջեւէն, ամէն ժամանակէ աւելի վայրագ ու առիւնուշտ, նորէն հազարաւորներ ճամբայ ինկան հեւ ի հեւ, յողմութենէ ինչապէս համար աշխարհիս չորս անկիւնները: Նոյն արհաւիրքը տաղտըղնեց մեզի հեռու ոչ անձանօթ աշխարհներ, ուր հիմա կը մաքառինք գայթող բայլերով, ապրելու անյգլի ու բըռնաւոր հարկէն ընդբարը: Յաւերը քիչ քիչ քիչ կ'ամօքին, — որովհետեւ աւաղանքը կարելի չէ որ յաւիտեանապէս զրլուկները ծծէ, ու արցունքը պէտք է որ չորնախալով նամ կոպերուն ծայրը, — կսկիծները կը ստուերոտին, ու շատեր նոր կեանքի մը սկզբնաւորութեան հրճուանքն ու գոհացումը կը սկսին վաչելի:

Բայց Կարօան ու Յիշատակը, ցաւին երկու տըրտում՝ քայրերը, երբեք մեզի պիտի չթողուն:



Անոնցմէ չեմ որոնք պանդխտութիւնը անհրաժեշտօրէն չարեք մը կը նկատեն ցեղի մը համար:

Մեր հայրերուն հողին վրայ, ուր կաշկանդուած մնացած ենք ստորին ցեղերէ շրջապատուած, քաղաքակրթութիւնը չի կրնար մուտ գործել հիմա: Ու հարկաւոր է որ մեր մէջէն դանուին մարդիկ որոնք քաղաքակրթութեան երթան, ու անոր բարեկեցիկը բերին մեզի իրենց դարձին:

Ու ցեղին տարածումը՝ անպատճառ ցեղին տկարացումը չէ:

Անոնք որ հայրենիքէն կը մեկնին դէպի գործունէութեան աւելի լայն ու ընդարձակ պայարեղներ, ու կը

տիրանան անոնց, ուժ մը կ'աւելցնեն իրենց ցեղին վրայ: Հայրենիքին ճառագայթումներն են անոնք ամէն կողմ: Երբ հելլենական անկախութեան պատերազմին ատեն բերաւոր Յոյներ իրենց հայրենի հողը թողուցին բըռնիկամ կամայ, հելլենութիւնը առժամայ նուազում մը կրեց անշուշտ: Բայց կէս դար շանցած, կը տեսնենք որ այդ գաղթականները աշխարհի ամէն մեծ նաւահան, զիտներուն մէջ, Օտէսայէն մինչև Ալեքսանդրիա, Լոնտոնէն մինչև Կալիֆոռնիա, գործունէութեան հսկայ կեդրոններ հաստատած են, որոնք հելլենութեան պիտաւոր ուժերէն մին կը կազմեն այսօր:

Խարբերոցի կամ Տիարպէքերցի Հայը որ Ամերիկա նետած է ինքզինքը, հայրենի բունէն անշատուած ու չորցած ճիւղ մը չէ: Հայրենիքին բարօրութեանը համար այնքան օգտակար է ան որքան անոնք որ հոն իրենց հայրերուն հողին վրայ չը մնան արի ու անվիանդ:

Մեզի համար կորուստը այն օրը պիտի ըլլար երբոր բոլոր այդ մեկնողները սրտով ալ բաժնուէին իրենց երկրէն, երբոր ա՛լ աշուրնին ետեւին չըլլար:

Մենք ամենքս ատոր աշխատելու ենք, այդ կարօնին անմեռ մնալուն:

Ան արդէն կայ մեր ամենուս մէջ: Բուն Հայրենի հողէն մեկնողներէն բոլոր անոնք որ տեսած եմ, մէկ բաղձանք մը ունին. իրենց տեղը դառնալ:

Արժարծենք ու հրահրենք այդ բաղձանքը:

Ժողովրդական երդի մը յանկերդը կը յիշեմ, ան արթնստ երդի մը որուն մէջ մտկայն կը գառնայ կը դառնայ սա աղաղակը կը հնչէ.

Հայրենիք պիտք է երբայ:

Ասիկա մեր նշանաբանը ըլլալու է օտարութեան հողին վրայ: Քաղաքակրթութեան բարեկեցիկը որ մեզ կը շրջապատեն, երբեք մեր աչքէն ծածկելու չեն հեռաւոր երկիրը որ մերն է և զի մեր գուրգուրանքին տաքութեանը պէտք ունի:

Երբո՞ր մեր մտածումը անոր կապուած մնայ, բաժանման ցաւը նուազ ծանր պիտի ըլլայ մնացողներուն ու տարականերուն, ու կորուստի վախէն ազատած, պիտի կրնանք սպասել լաւագոյն օրերուն որոնք պիտի գան:

Ամալներ յայ օրերուն՝ Վանաւանդ, ուր տօները ամէն պանդխտ Հայու սիրտը կը ճմլեն իր կարօտներուն զայրացումովը, ամեն ձեզ ուր Հայերմէթիւմներ կան, պէտք է մէկտեղին նոյն մտածումով, հայրենիքի խօսքերով, Վայճնի երգերով: Փակ պատռահաններուն ետեւ, սրբութեան վայրի մը պէս պիտի ըլլայ սեւեակը ուր եղբայրներ ըզլ ըզլի գան, յիշատակներուն սզումին մէջ միանան, ու միջոցին մէջէն իրենց հողիններուն տան թռչել դէպի մեր դժբաղդ հայրենիքը, որ, ցաւէն աղուրցած, երբեք այնքան անուշ երեսցած չէր մեզի:

Լ. ԶՈՐԹՈՒՄԵԱՆ

ԱՂՕԹՔԸ

Պատկերը քանի՛ կը հեռանայ այնչափ պեղի զը-  
մնդակ ձև մը կ'առնէ երևակայութեանս մէջ, ոչ ա'լ կը  
սկսիմ կասկածիլ թէ իրաւ պատահեցաւ անիկա:

Մղձաւանջի տարին, 96 հոկտեմբերին էր, այն  
միջոցին ուր Պոլսոյ ջարդէն փախչող Հայերը յայն կա-  
ռավարութենէն իրենց շնորհուած 50ի չափ զինուորա-  
կան վրաններուն տակ կ'ապրէին, Բիրէի ու Աթէնքի  
միջև, Ֆայէրոյի ձօն՝ իրենց թիւը հազարը կ'անցնէր:  
ամենէն թշուառներն էին ատոնք, անոնք որ պառկեցնու տեղ  
չունէին, ուտելիք հաց չունէին, ընդհանրապէս գաւա-  
ռացիներ, բնանախիր կամ բանւոր:

Մէջերնին Տիւրքիցիներու խումբ մը կար, քառա-  
սուն հոգիի չափ: Քարտիներուն ձօն, անզինական շու-  
զենաւի մը մէջ, կ'աշխատին եղբր ամուս պարսկելու,  
երբոր կոտորածը սկսեր է ու ա'լ հոն մնացեր են, խա-  
նի մը մէջ թողնով իրենց գոյքն ու զրամը: Նաւապետը  
հաւանք է զիրենք պահել, պայմանաւ որ աշխատին:  
Պոլսէն մեկնած էին զկալի Պաթում՝ ուր կ'երթար նաւը:  
Հոն ոուս կառավարութիւնը արգիլած էր դուրս ելլելու՝  
Նաւը բնանաւորուած դարձեր էր Պոլսի ու նորէն մեկ-  
նած զկալի Սեւ ծով, այս անգամ Օտեսա, ալիւր առ-  
նելու համար: Օտեսայէն եկած էր Բիրէ ուր վերջապէս  
կրցեր էին դուրս նետել ինքզինքնին, վեց շաբաթ ճամ-  
բորդիէ ետքը: Քառասուն օր աշխատեալ, բեռ կրեր էին  
անընդհատ, առանց վարձք ստանալու, միայն չոր հացի  
մը փոխարէն:

— Զեր կեանքը փրկեցի, զեռ ինչ կ'ուզէք, պատան-  
խանած էր նաւապետը, երբ համարձակեր էին բան մը  
պահանջել անկէ:

Այդ քառասուն օրուան մէջ ժամանակ չէին գտած  
լուացուելու: Ածուխի փոշիով սեւցած մարմիննուն վրայ  
ալիւրը եկած ծեփուած էր, մեռած ուրուականի չարա-  
չուք զէմքեր տալով իրենց:

Զուրը, լուացուելու համար պէտք եղած շուրը, ի-  
րենց կը պահէր Գաս հիմակ, Ֆայէրոյի գաճախին մէջ:  
Մօտերը աղբիւր չկար, ամէն մարդ խմելու շուրը Ֆա-  
լերոյէն կը բերեր սափորով եւ Տիւրքիցիները չէին կրնար  
երթալ մինչեւ հոն: Ոստիկանները արգիլած էին իրենց  
վրաններու սահմաններէն անդին անցնիլ, սրովհետեւ  
հագուած չունէին...: Պոլսի աշխատութեան միջոցին  
ինչ որ կը կրէին այն էր միայն վրանին, այսինքն կարճ  
վարտիք մը մինչեւ ծուկներնին իջած ու մերկ մար-  
միննուն վրայէն ածուխի տոպրակ մը զոր ծակած էին  
որպէս զի զլուխնին ու ձեռքերնին դուրս հանեն:

Ու ծովը, շինջակապուտակ, կը տարածուէր հոն,  
բիշ մը անդին, աչքերնուն զիմաց, ուր ամէն մարդ  
կ'երթար լուացուելու, բազմիքներուն մէջ:

— Ախ, մենք չպիտի՛ կրնանք մէյ մը մտնալ ծովը,  
կը հառաչէին խեղճերը օրն ի բուն:

— Զէ՛. շատ աղտոտ էին մաքրուելու իրաւունք ունե-  
նալու համար:

Ու ա'լ տանջանք մը եղած էր ասիկա իրենց հա-  
մար, փորձանքին գերմղրականը, Յետին Գողգոթան:  
Դիպախտութեան համար շինուած իրենց ուղեղին մէջ  
համակերպութեամբ կ'ընդունէին ամէն բան, իրենց գոյ-  
քերուն ու զրամին կորուստը, վեց շաբաթ դեգերուած  
ծովերուն վրայ: Յունաստան վրանի տակ ապրելը, չոր  
հաց ուտելը՝ բայց ածուխով ու ալիւրով շաղախուիլ ու  
ամիսներով չկրնալ լուացուիլ: գոնէ՛ անգամ մը, ասիկա  
չէին կրնար ըմբռնել:

— Հիսապիւն մէջ չի կար, կ'ըսէին զխոս յուսահա-  
տական որորումով մը, որ ալ աւելի ահապի գէմք մը  
կուտար իրենց:

Տիւրքիցիներէն ետքը պէտք է յիշեալ Մշեցիներու  
խումբ մը: Ասոնք քման քսանըհինգ հոգիէ կը բաղկա-  
նային: Պանքայի ցոյցէն քանի մը ամիս առաջ բանա  
նետուած ու հոն մնացած էին մինչեւ օգոստոսի վեր-  
ջերը: Օր մըն ալ զիրենք կանչեր ու հարցուցեր էին:

— Ո՛ւր տեղացի էք:

— Մշեցի:

— Լա՛ւ, հիմա անմիջապէս ճամբաք պիտի ելլէք:  
ձեր երկիրը երթալու համար:

Ու ոստիկաններէ շրջապատուած, ոչխարի հօտի մը  
պէս, բերեր նետեր էին զիրենք աւատիական շոգենաւ  
մը: Երգենաւը ճամբայ ելլելէն ետքը Մշեցիները հաս-  
կցած էին որ ոստիկանները ասլալմամբ փոխանակ զի-  
րենք Տրապիզոն գացող նաւը առաջնորդելու թրիկսթէ  
մեկնողին մէջը բերած էին: Արդ, իրենց փոխադրու-  
թեան ծախքին համար՝ ոստիկանութիւնը կարգադրու-  
թիւն ըրած է եղբր Տրապիզոնի շոգենաւին համար, այն-  
պէս որ նաւապետը փոխադրութեան զինը կը պահանջէ  
Մշեցիներէն որոնք զրուշ մը անդամ չունին զրպաննին:  
Նաւապետը կը սպանայ զիրենք կապել կամըջակէն  
վրայ, կայմին պարաններուն, ինչպէս շոգենաւին օրէն-  
քը կը տրամադրէ:

— Ըրէք ինչ որ կ'ուզէք, կը պատասխանեն ճարահատ:  
Եւ օրէնքը կը գործադրուի:

Քսանըվեց հոգին հաստ չունեններով կը կապուին  
կայմին շուրջն ու քովերը ամբողջօրը: Գիշերը վրայ  
կը հարնի ու կապերը չեն քակուիր: Ծովը որ արդէն  
բաւական յուզեալ էր, կ'ալիկոծի, ջրգենաւին քատա-  
նումները կը սաստկանան, ու կոհակները կուգան ծեծել  
խեղճերը: Մշեցիները կը յիշեն իրենց բանտը ու ախ  
կը քաշեն ազատած ըլլալուն համար:

Կէս զիշերուն ահոնի իրարանցում մը կը պատա-  
հի կամըջակին վրայ: Խոշոր պարապ տակառներ կա-  
յին նաւուն եգերքները շարուած ու պարաններով պըր-  
կուած. ալիկոծութեան տատանումներէն պարանները կը  
խզուին ու ահա՛ տակառները կը սխիին թաւալել մէկ

կողմն միտք, գլխորելով ու զարնգելով ամէն կողմ ու մանաւանդ կամրջին մէջտեղը կայուն և շրթաթաթախ Մշեցիներուն՝ որոնք յուսահատ ճիչերով կը սկսին օգնութիւն աղաղակել: Նաւագները կը հասնին, տակաւնները նոթէն կը կառնեն իրենց տեղերը, սակայն բանը բանէն անցած էր: Մշեցիները ջարդուկոտոր եղած էին, որին ոտքը, որին թեւը, որին սրունքը, որին գլուխը ճմուռք, կոտոր, պատոներ էր: Պաղ տլիքները, որոնք քիչ մը պառլ կը շարշարէին զիրենք, ձեծելով իրենց մարմինը, հիմակ արինալից անգամները լուսով տեսակ մը սփոփանք, ամոքում կուտային անոնց:

Նաւապետը կուգայ, կը տեսնայ այդ նախճիրը, լացով ու պաղատանքով խմորուած վիրալից դէմքերը, ու կը զթայ վրանին...

Կապանքն կ'ազատին:

Երբ ոտք դրին Բիրէի քարափներուն վրայ, ամենքս ալ, իրենց վիրակապ անգամները տեսնելով, կարծեցինք թէ վայրագ թիրքերու զոհեր էին այդ թշուառները:

— Զէ՛, պատասխանեցին, թիրքը բան չըբաւ մեզի...

Ու պատմեցին իրենց տխուր պատմութիւնը:

Վրաններուն տակ, Տիլրիկցիներուն հետ, ասոնք ալ գերազոյն տարաբախտներն էին, մարդոցմ ու աստուածներէ լքուած վտարուած ճակատադրային նշաւակներ՝ որոնց վրայ Չարիքը իր սանձարձակ մոլեգնութիւնը կը թափէր:

— Գեո ինչէր պիտի տեսնանք՝ դեռ ինչէր պիտի տեսնանք, կը մրմոյային անձկութեամբ, անցածին յիշատակէն ահաբեկ ու զալիք անձանթիւն սարսափած:

Փախուողական միւս արկածները համար ասոնք սփոփանք մը եղած էին, միթիթանք մը զօր ետսիրութիւնը իրենց կը ներշնչէր: Իրենց դժբախտութիւնը կը չափէին անոնցին հետ ու թեթևացում մը կը զգային:

— Փառք Աստուծոյ, կը մտածէին, զոնէ մենք սա Տիլրիկցիներուն ոչ Մշեցիներուն փորձանքն չհանդիպեցանք:

Փառք Աստուծոյ, այո՛, որովհետև ամենակարգն Աստուած ամէնուն զլուին ալ կրնար բերել նոյն փորձանքը:

Ու վաղորդային երկիւղը կը ծանրանար վրանին ու կը ճնշէր իրենց սարսափահար կութիւնը: Ա՛հ, կ'ուզէին հեռացնել անձանթի վտանգը որ կրնար զալ տակաւին, մեղմել, ամոքել խաւարին անդունդներէն ելլող ու զիրենք հարուածող անտեսանելի բազուկը: Յայտնութեան եօթը հրեշտակները՝ որոնք Աստուծոյ բարկութիւնը կը թափէին իրենց գլխուն: Ու պէտքը, անդիմադրելի պէտքը կը զգային աղաչելու, պաղատելու, գետնամած աղաղակելու, որպէս զի ա՛լ ներուէր, թողութիւն տրբուէր իրենց:

— Աղօթենք, աղօթենք որ Աստուած ողորմի մեզի:

Այ՛ կը ամենուն վրայ տիրող մաածուլը: Ա՛լ իրենց մտքին, սրտին ու շիղերուն գործունէութիւնը կորսնցուցնել էին, ա՛լ կուշտու, տոկալու կորուստն չէր

մնացեր: Հայոց ազատութեան վրայ չէին մտածեր, թիրքին կործանումը չէին բաղձար. ա՛լ մոռցեր էին ամէն բան, իրենց կնիկները, զաւակները, արտերը, գոյքերը, իրենց հայրենիքը:

— Մեր կիներն ու աղջիկները առեսնեցին, մեր զաւակները մեռնեցին, մեր հողերը գրաւեցին՝ մեր գոյքերը յափշտակեցին... Հեղա՛ ըլլայ, կը մտածէին՝ միայն թէ ա՛լ մոռցուինք, ա՛լ շարիքը թող մեզ չհալնա՞նք:

Երբ օր մը գացեր էի նորէն դեգերել իրենց վրանները շուրջը, տեսայ որ ամենքն ալ բոլորուեր են, դաշտին մէջ, մէկու մը քով որ գիրք մը կը կարդար:

Հեռուէն ճանչցայ զինքը. «Տէր Հայր»ն էր. վաթսուներեք տարեկան Սեբաստացի բեռնակիր մը որուն այդ անունը կուտային միշտ աղօթելուն եւ ուրիշներուն ալ աղօթել քարոզելուն համար: Նախկին յեղափոխական մըն էր, Սեբաստայի դիւղերէն մէկուն ջոջը, որ օր մը ձերբախալուեր ու տարիներով բանտը մնալէ հետք կրցեր էր ազատիլ իր ամբողջ հարատւութիւնը մաս առ մաս կերտելով թիրքերուն: Գնդը՝ իր տունը վերադառնալով, թափուր գտեր էր զայն. կինը մեռած էր ու չորս զաւակները ձգեր գացեր էին հրոսախումբները. հետ: Հարսերն ու երկու աղջիկները մնացեր էին միայն, առանց ապրուստի, դիւղացիներուն ողորմութեանը կարօտ, խարխիլի հիւղակի մը մէջ կծկտած: Նախկին ջոջը մեկներ էր Պոլիս, բեռնակրութեամբ ստակ ձարելու իրեններուն, մինչև որ օր մը լուր առեր էր թէ Քիւրտերը եկած աւարի տուած էին իրենց գեղը և աղջիկներն ու հարսերը հափափած: Հիմակ ա՛լ միս մինակ էր աշխարհի երեսը՝ միս մինակ Ս. Գրքին հետ զոր թեկն տակ կը պտըտցնէր:

Երբ մոտեցայ շրջանակին, Սեբաստացին ուղմասնեքն զլուիններ կը կարդար, որոնք ինք զատեր ու նշանակեր էր:

«Զարի պէս թափուեցայ, կ'աղաղակէր զինքը երկիւղածութեամբ մտիկ ընողները յուսահատ նայուածքով մը պարուրելով, շուրի պէս թափուեցայ ու ամէն ոսկորներս քակուեցան, սիրտս մօմի պէս եղաւ, հալեցաւ փորիս մէջ:

«Զարացաւ իմ սյծս հողէ ամանի մը պէս, ու լեզուս քմացս փակաւ. եւ զիս մահուան հողը գրին:»

«Վասն զի շունները չորս կողմս առին, շարերուն խաղովքը զիս պատեցին, ձեռքերս ու ոտքերս ծակեցին:»

«Ի՛մ ամէն ոսկորներս կրնամ համբել. անոնք կը նսլին, կը տեսնեն զիս:»

«Ի՛մ անձս սուրէն ազատէ՛, ու կեանքս շանը ձեռքէն:»

«Խորունկ ցեխի մը մէջ կ'ընկղմիմ, ուր որ կայնելու տեղ չկայ. շուրերուն խորունկ տեղերը մտայ, ու յորձանքները իս ընկղմեցին:»

«Յոգնեցայ ես կանչելն, կօկորցս ցամբեցաւ, աչքերս նուաղեցան իմ Աստուծոյ սպասելն»:

«Իմ աղօթքս քու առջից թող փլլէ. խոնարհեցօ՛ւր քու ականջդ իմ աղաղակիս»:

«Ինչու որ իմ անձս չարիքներով լեցուեցաւ ու իմ կեանքս զերեզմանին մօտեցաւ»:

«Դուն զիս ամենէն խարունկ գուրին մէջը դրիր, խաւարային անզունդներուն մէջ»:

«Քու սրտմտութիւնդ ծանրացաւ իմ վրաս, եքու բոլոր ախիքներովդ զիս շարշարեցիր»:

«Տառապանքն աչքերս վատեցան. ամէն օր քեզի աղաղակեցի, ո՛վ Տէր, ձեռքերս քեզի երկնցուցի»:

«Ո՛վ Տէր, ինչի՞նչ իմ անձս կը մերժես, ու քու երեսդ կը ծածկես ինձմէ»:

«Ամէն օր ջուրի պէս իս պատեցիր, մէկտեղ չարս կողմս առիր»:

«Հեռացուցիր ինձմէ սիրելին ու բարեկամը, իմ ճանչուորներս խաւարի մէջ են...»:

Ու խեղճ ձկնորսի «Տէր Հայր»ը սկստւ լալ... Յուզմունքը տիրեց ամենուն վրայ, իրենց ամբողջ տառապանքը երեցաւ նորէն իր աղետային կերպ սր սնքովը և վաղուան երկիւղը նորէն ցնցեց զիրենք:

—Աղօթենք, աղօթենք, զսչեցին միաբերան. Տէր Հայր, ժամերգութիւն մը բրէ մեզի:

Սերաստացին զրբը գոցեց, աչքերը սրբեց եւ ըսաւ.

— Այո՛, երեսնիս զէպի Արեւելք դարձնենք ու աղօթենք:

Ամենքս շարուեցանք վրաններէն բիչ մը անդին, գաշտին մէջ. Հիմէթ լերան զիմացը: Հետուն հոյակապ կը բարձրանար աչքերնուս առջեւ Ակրոպոլիսը որուն բանթէլիկեան մարմարները կ'ոսկեզօծուէին Սալամինայի ետեւ մարը մտնող արեւուն ճառագայթներէն: Արարողութիւնը այնչափ սրտաշարժ, շրջանակը այնչափ վեհափառ քո սպասուրիչ էր որ խորին յուզում մը պատեց, պաշարեց երբոր աղօթքները պիտան:

Սերաստացի ձերուինն, մեր շարքերէն քանի մը քայլ անդին կեցած էր, թեւերը տարածած, խուզարկու, աղաչաւոր նայուածքը զէպի վեր, ի գո՛ւր փնտռելով Ան որուն կ'ուզուէին իր պաղատանքները: Եւ ինձի կը թուէր թէ Մովսէսն էր անիկա, անապատին մէջ, Փարաւոնի երեսն փախչող իր ժողովրդին հետ: Ասեն ապէն պարթեւ հասակը կը խոնարհէր, ծունկի կուգար, կը տարածուէր գեպնին վրայ ու հողը կը համբուրէր, եւ իր ետեւ կեցող քաղմութիւնն ալ կ'իյնար, երեսը զեանին, յանկարծ գլխուն լախտի հարուած մը ուտողի պակուցումովը:

Մութը տիրեց կամաց կամաց, արեւ աներևոյթ եղաւ Պելուպոնեսի լեռներուն ետեւ, Հիմէթի մանուշակագոյն կատարները սեցան ու Պարթենոն կորուցուց իր շողջողուն փայլը: Անոնք կը շարունակէին իրենց աղօթքը, ծնրազրուութիւնները, ցաւատանջ ելեկները, «Տէր

ողորմեա, Տէր ողորմեա» կը հառաչէր ատեն ատեն Սերաստացին իր ամբողջ էութեամբ, աղիքներուն ու երկամունքին խորէն եկող անդնդային ձայնով մը, ու բաղմութիւնը կը կրկնէր աղաղակը, զեանամած զալարուելով հողին երեսը:

—Տէր ողորմեա, Տէր ողորմեա...

Գիշերը հասած էր. աստղերը կը փայլէին ու մութին մէջ բաղմութիւնը պատառ պատառ եղած ստուերի մը կը փոխուէր: Տիւրիկցիները իրենց մեռած ուրուականի դէմքով, Մշեցիները իրենց ճերմակ վիրակապներով, ա՛լ ճիւղներու կը նմանէին: Առասպելական շարաշուք կախարչներու գոթային համախմբում մըն էր կարծես, որ խաւարին մէջ, չրլլալիք, ցնորական աղէտք մը կը նիւթէ:

Ու աղօթքները, տէր ողորմեաները, ծնրազրուութիւնները. հառաչանքները կը տեւէին անդադրում: Ա՛լ յափքշտակման, վերացումի, հիացութեան սլորտներուն մէջ բռնուած, կը բշուէին կը տարուէին անզիտակից, անձնսթոյգ:

—Աստուած, լուս մի ցուցօ՛ւր: Լսուեցաւ յանկարծ ու ահա՛ զինով, խելայեղ բաղմութիւնը կրկնեց մէկ բերան:

—Աստուած, լուս մի ցուցօ՛ւր, Ահ, ցաւագար խեղճ հոգիներ, իրենց երկարատեւ պաղատանքի սպասիչ ճիւղն ետքը կ'ուզէին որ գոնէ տեւ մը հասած ըլլային, մէկը ամօքած ըլլային այդ աղօթքները, երկրպագութիւնները, ծեծուած կուրծքերը, արցունքներն ու հառաչանքները. ու լոյս մը, նշան մը կը խնդրէին հիմա, պզտիկ աննշան հրաշք մը երկնքին երեսը, որ պիտի անպորբացնէր, պիտի սրտապնդեր զիրենք:

Լոյսը չերեցաւ ու մթութիւնը պատեց հեռզհեռ Տիւրքոյի վրանները:

\* \*

Անցած տարի, Միւր-Երօ, հելլենական վերջին պատերազմին մասնաճիւղ հայ կամաւորներու նուիրուած գեղեցիկ ու սրտայոյզ յօդուածի մը մէջ կը յիշէր Սերաստացի ձեր կամաւոր մը. «Սիլզբէն ի վեր աչուրները վրաս յառած, լուս ու անխօս ինձի կը նայէր ան, մտիկ կ'ընէր պատանիներուն պատմութիւնը, ինքը որ անոնց պապը կրնար ըլլալ, վաթսունամեայ ձեր հերոսը: Չը համարձակեցայ հարցնել իր պատմութիւնը, յարգանքը լեզուս պրից, ի՞նչպէս լացս կրցայ զուպել այն աշուոր զլսուն նախըմով: Գուշակեցի թէ ան աշխարհիս վրայ միս մինակ մնացած է ու հոն եկած էր զէնքը ձեռքը մեռնելու, սակայն մահը զինքը չէր ուզած: Սպիտակ գլուխը անշարժ միշտ ինձի կը նայէր: Ես աչուրներս վար առի յարգանքով, զեանը կը նայէի, մինչ սիրտս յանկարծ նետեց... Վաթսունամեայ ձեր կարիճը իր դաւառին տրիխները հանել չէր ուզած ու պահած էր:

տրեխներէն զուրս զուլպաները (ո՛վ զիտէ իր սիրելիներէն որո՛ւն մատներէն հիւսուած) հանած ու տաբատին վրայ անցուցած էր: Վայրկեաններ զիտեցի զանոնք... վաթսուն տարիներ իր երկրին հողը, հայ հողը կոխած էր նոյնպիսի տրեխներով ու զուլպաներով, ու անոնցմով թշնամի Տաճկին վրայ կը բալէր...»

Երբ այս տողերը կարդացի յիշեցի «Տէր Հայր»ը, իր հեծկառուցները, Ֆալերոյի դաշտին ազօթը:

«Լոյս»ը չէր երեցած անկէ ի վեր. և Սեբաստացի ծերունին Գիրքը նետած էր ու հրացանը առած: Անիկա իր ձեռքին մէջ գոնէ լոյս մը կը ցայտեցնէր երբ բլթակին զպչէր, սպաննիչ, կոտորիչ... մխիթարիչ լոյս մը:

Ե. Օ.

ՀԱՅ ՏԱՌԱՊԱՆՔԷՆ

Յ Ա Ղ Թ Ո Ի Ա Ն Ե Ր Ը

Չեմ զիտեր ինչո՛ւ, ձմեռնամուտի այս դժիւսմ իրիկուան անողոք ու թելադրական ցուրտին մէջէն, Անոնց կը խորհիմ զահալիտօրէն:

Մոմ մը առջեւ կը մեռնի, իր հիւանդոտ յուսահատ կեանքովը իմ հսկումս լուսաւորելէ հիւծուած:

Ու մինակ կը մնամ, միշտ Անոնց ցաւագին ու եղբայրական մտածումին հետ, միս մինակ, մութէն անհունացած սենեակիս լուսթեանը մէջ անշարժ:

Բայց աչքերս, յամառօրէն բաց, կը սեւեռին խաւարին վրայ, ու հոգիս անոնց մէջ կը խուժէ, կը լեցուի հիմա, աղջամուղջէ գերատես նայուածք մը դանախով որ կը հեռանայ, կը թափառի, կը փնտռէ անձայրածիր սեխմ մէջ ու հոն կը գտնայ նորէն զԱնոնք:

Ու անյազօրէն կը զիտեմ խաւարին մէջ...»

Օ՛ անդոհական տողանցութիւնը բոլոր այդ յոգնատանջ մարմիններուն որոնք կը զողզղան անպատասպար, դժնդակ խշտեակներու վրայ, բոլոր այդ դալկահար զբլուխներուն որոնք մայրական բարձ մըն ալ չունին զոնէ՛ իրենց տաժանքի ցորեկներուն որբութիւնը թաղելու համար անոր մէջ:

Ու անսողորմ զիշերը կը յաւերժանայ անոնց լքումի պատճառով ինձ վրայ:

\* \* \*

Ո՞վ պիտի մտածէ անոնց:

Է՛ս արգահատիլիներն են սակայն անոնք՝ ազգային քայքայումին յաջորդող՝ զրկանքի ու անստուգութեան

կեանքին մատնուած թափառական ու անյոյս տարազիրներուն:

Անյոյս, որովհետեւ կեանքի կռիւն մէջ մաքառելէ առաջ յաղթուողներ եղան անոնք, ու զիտեն իրենք ասիկա, ու չեն սպասեր լաւագոյն վիճակներու:

Իրենց անկարողութեան արտուժ զիտակցութիւնը չ'ընկճեր զիրենք բարոյապէս, որովհետեւ կը կրկնուի անիկա խաղալ ու հպարտ վստահութեամբը իրենց ամենակարողութեան — նպաստաւոր պայմաններու մէջ, — եւ որովհետեւ զիտեն անոնք որ անզթօրէն անիրաւունեցան ճակատագրէն:

Ու խրոխտ պիտի մնան անոնք, իրենց խեղճութեանը մէջ նոյն իսկ գունաթափ ու կամախացած: Ու պիտի խնդան անոնք երգեմն, երկար, անզուսպ ու հիւանդ խնդուքով մը ուր խենդութեան խոպոտ շունչ մը պիտի հեւայ: Իրենց խղճմտանքին պայծառութիւնը ուժգնօրէն վեր կը բռնէ զիրենք, ու արհամարհանքի հոյակապ նայուածքներ կը դնէ անոնց մարած աչքերուն մէջ:

Անոնք երբեք չպիտի յաջողին: Ու լուս պիտի մնայ իրենց կսկիծը, յուսահատօրէն լուս, որովհետեւ — ապրտամբ աշակերտներ իրենց վարպետներուն — չսորվեցան անոնք ժպտուն ու աւելնոտ պնակալեզութիւններու, շահախնդիր ու շնական ուրացումներու, գոհհիկ կեղծաւորութիւններու զիւրին ու անարդ արուեստը:

\* \* \*

Նիւթական համեստ բարօրութիւն մը ներեց անոնց ապրիլ, հայրենի յարկին տակ, պատանեկան տենդոտ ու մաքուր կեանք մը, աշխատութեան ու երազանքի կեանք մը: Մտքի մարդեր ըլլալ ու մեծ ըլլալ տենչացին, ու պաշտելի խանդավառումով մը հետապնդեցան իրենց ազնուական երազին:

Միամիտներ ու յամառներ եղան, երբ զեռ հեղնութիւնը, սպառող ու ցաւազին հեզութիւնը չէր զալարած իրենց մատաղ հոգիները, չէր թունաւորած զանոնք ավուրդ, փճացնող վախովը ծիծաղելիին: Ու գիշերներ լուսցոցին անոնք բաց հասարակներու վրայ հակած ու ճերմակ թերթերու առջև սարսուռն: Ոչինչ կրցաւ վրդովել, ոչինչ կրցաւ պղծել իրենց հաւատքի յափշտակութիւնները, իրենց յուզիչ ու արդաւանգ զինուորութիւնները:

Ու տարօրինապէս կանխահաս կրցան անոնք, միս մինակ, աղատագրուիլ վերջնապէս զիրենք պաշարող, իրենց վրայ ճնշող ժամանակակից իմաստակութեան միահեծան, կուրցնող ու տիրական ազդեցութեանէն, ու անկախ մտաւորականներ ըլլալ:

\* \* \*

Մտաւորական գործունէութեան կեանքի մը կը սխալբանտուէին հիմա, անձնութիւններու անկեղծ ու ջերմ

ոանգ զգացումներով: Ա՛լ կամէութիւններու շրջանը ան-  
ցած էր, ու եսական ու հեշտամու տիչերակերներ չէ՛-  
որ պիտի ուզէին ըլլալ անոնք: Իրենց ամբողջ երիտա-  
սարդ կորովը, իրենց բովանդակ թանկազին ճիղը ի-  
րենց ցեղին նուիրելու անոր ազնուացումին վատնելու  
մտահոգութիւնը առաջնորդած էր զիրենք, ու սկեպտիկ-  
ներ չուզեցին ըլլալ անոնք, ու զիւրին գոհացումներու  
մէջ չսահմանափակուեցաւ իրենց փառասիրութիւնը:

Ու չարաշուք զիչեր մը—որուն յաջորդ առտուն իսկ  
պիտի սխեկն բարերար պայքարը— փոթորիկը պայթե-  
ցաւ, ու քմահաճ ու զիւային ալիքներ տարին, նետեցին  
զանոնք օտար ու անծանօթ ափերու վրայ:

Գլխիվայր չարաշար թաւալում մը եղաւ ասիկա:  
Երբ սթափեցան բիրտ ցնցումին շուարումէն, մահացու  
անձկութեան սարսուռով մը տեսան որ անկարողութեան  
զատապարտուած էին: Իրենց ճիղը տարածերձօրէն զը-  
րական ու իմաստասիրական եղած էր, ու միջավայրը իս-  
պառ կորսուած իրենց համար ու ապրելու ահեղ հարցը  
ցցուած իրենց առջեւ: Վարժապետներ ու զրոյներ ըլլա-  
լու պատրաստուած էին, ու տեսան թէ ... «Վաճառա-  
կանի գրազիր» ըլլալ պէտք պէտք էր պատառ մը հա-  
ցի համար:

Ու ըմբոստացան ու հայհոյեցին ու հեծկտացին խեղճ  
ակամայ «տեսասիւնէ» ներք:

\* \* \*

Հիմա ա՛լ յոգնած են ու լուռ:

Դատապարտուած ու անօգուտ կեանքեր են որոնց  
վրայ անողոք ճակատագրականութիւն մը կը ծանրանայ,  
կը ճնշէ, կը յամտի, մուկզին ու անվերջ հալածան-  
քի կատարութեամբ մը:

Գլուխնին կոր ու յամբաքայլ՝ աննպատակ կ'երթան  
անծանօթ ճամբաներէ:

Երբեմն կը հանդիպին հայրենակիցներու բազում-  
թեան մը երջանիկ ու յաջողած, որ չի ճանչնար զի-  
րենք ու չի հասկնար անոնց լեզուն: Անոնք իրենց ազ-  
գին մէջ իսկ աքսորուածներ, իրենց մօրը ծիծերէն կախ-  
ուած որբեր եղան:

Վերագարձի ու փրկութեան երկչուտ արշալոյս մը  
շատ հեղ կը ճառագայթէ յանկարծ անոնց ամպոտ հո-  
գիններուն մէջ, ու վայրկեան մը կը յուսան խելայեղօրէն:  
Բայց Պոլիսը վերջալոյսի զարհուրանքն է որ այդ խոր-  
տակուած կեանքերուն ետևի հորիզոնին վրայ կը սա-  
ւառնի և որուն անոնք ա՛լ չեն կրնար դառնալ նայիլ:

\* \* \*

Ու պիտի փճանան անոնք, ամենքն ալ:

Եթէ զրկանքի կեանքը յաւերժանայ ու ապրին քիչ  
մը ամէն օր մեռնելով, եթէ թշուառութիւնը չընկճէ  
վերջնադէս զանոնք, անօթութիւնը, հրէշային ու ա-

նօթի Անօթութիւնը պիտի երկարօրէն, անյագօրէն,  
վայրագօրէն ուտէ անոնց ուղեղը, ու վաղը ցաւագար-  
ներ, անհուն, անշարժ աչքերով ցաւագարներ պիտի  
ըլլան անոնք:

Ու ա՛հ կը չպիտի մտածէ անոնք:

ՍՈՒՐԷՆ ՊԱՐԹԵՒԵԱՆ

ՃԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԷՉԵՐ

ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Թիւրքիոյ Հայոց նախկին պատրիարք Աշըգեան Խո-  
րէն եպիսկոպոսին մահը պատեհութիւն կ'ընծայէ յե-  
տագարձ ակնարկ մը տալու անցեալի մը, որ թէև զեռ  
երէկուանը, և զոր սակայն տասը տարուան պատահար-  
ները կը ստուերացնեն մեր աչքերուն իբր պատմական  
հնագիւծներ մը:

Սակաւաթի չեն անոնք որ վերջին քննն տարի-  
ներս է. Պոլիս կատարուած պատրիարքական ընտրու-  
թիւնները լոկ դիպուածին կը վերագրեն կամ Պոլսեցի-  
ներու ո՛ր և է մէկ խմբակին մեքենայութեանցը: Պատմու-  
թեան սխալ հասկողութիւնը: Պերլինի վեհաժողովին մին-  
չև մեր օրերը ամէն անգամ երբ պատրիարքի փոփոխու-  
թեան պարագայ մը ներկայացած է, ընտրելիներու շուրջը  
մղուած պայքարը, տարուած յաղթանակը կամ կրուած  
պարտութիւնը միշտ ազդին քաղաքական ըմբռումներուն  
բնական հետեւանքն եղած են, զիպուածին ու կուսակ-  
ցական խմբակներու չափաւոր մասնակցութեամբը:

Վարժապետեան Ներսէս եպիսկոպոսին Թիւրքիոյ Հա-  
յոց պատրիարքութեան կոչուած թուականին թրքասեր  
ու թրքատեաց քաղաքականութիւններու գաղափարը զեռ  
որոշ գծերով չէր կերպարանար Հայոց մտքերուն առ-  
ջեւ: Պատմութեան թելադրութիւնները եւ իրականու-  
թեան ճշգրիտ ըմբռումը նպարտաւորած էին Թիւրքիոյ  
Հայերը օսմանեան իշխանութեանց հետ բարեհեղ վար-  
մունքի մը մէջ փնտռել քիչ թէ շատ տանելի կեանքի  
մը հնարաւորութիւնը: Երբ Հայաստանի համար բա-  
րենսորդութիւններու պահանջման բարեպատեհ ժամը հա-  
սած համարուեցաւ, Խրիմեան պայծրիարքը ուղղակի  
երկրին կառավարութեանը ներկայացուց Հայոց վիճա-  
կին բարձրձման պայմանները: Ներսէս եպիսկոպոս շա-  
րունակութիւնը եղաւ այն բոլոր պատրիարքներուն որոնք,  
առանց ո՛ր և է բացառութեան, հաւատարիմ գործադիր-  
ները եղած էին հնաւանդ քաղաքականութեան: Դեռ  
ո՛չ պատրիարքը, ո՛չ երեմիոսեանութիւնը, ո՛չ ազգէն  
ո՛ր և է հատուած, ո՛չ ոք կը մտաբերէր զէնքի զօրու-

Թեամբ կամ երուպական միջամտութեամբ Հայաստանի վիճակը բարեփոխելու խորհուրդ մը, երբ Արեւելեան խնդիրը 1876ին պաշտօնապէս վերաբացուեցաւ: Ներսէս պատրիարք որ թիւրքեան պատերազմին ամբողջ տեւողութեանը ջերմ թրքասեր հանդիսացած էր, յանկարծ յաղթական թշնամիին գիրկը նետուելով շնչեց ազգային բազմադարեան քաղաքականութիւնը: Ապագան սակայն երբ անմիջական արդիւնաւորութեամբ չարդարացուց Սան-Սթեփանոս ողջունուած ուղղութիւնը, սըխալած ըլլալու կասկածը սպրդեցաւ մտքերու մէջ, իրեն հետ բերելով վարանքով, տարակուսանքի տկարութիւնը որուն առաջին զոհը Ներսէս պատրիարք ինքն եղաւ: Թիւրքիոյ Հայոց միահեծան ղեկավարիչը համոզուելով թէ Եւրոպա Հայաստանի նպաստաւոր ո՛ր եւ է իրարդուութիւն անօրինելու անկարող պիտի գտնուէր առանց սուլթանին բարեացակամ հաճութեանը, ու սուլթանը բարեացակամութեան ո՛ր եւ է տրամադրութիւն ցոյց պիտի չի տար առանց Եւրոպայի ազդեցութեանը, չուզեց ո՛չ բացարձակապէս սուլթանին յարիլ, ո՛չ ալ միայն Եւրոպայի վրայ յուսադիր սպասել. թէ՛ սուլթանէն եւ թէ՛ Եւրոպայէն հաւասարապէս օգտուելու պատեհական քաղաքականութեան հետամտեցաւ: Երկբայանքի և վարանուծի ժամանակամիջոցին ներսէսեան միաձուլ զանգուածէն բեկորներ հետզհետէ անջատուելով կազմեցին մարմին մը որուն ծրագիրն էր միայն և միմիայն սուլթանէն ակնկալել Հայութեան բարեքը: Ազգային քաղաքականութիւնը երկու ճիւղի բաժնուեցաւ, երկուքն ալ ազգին մէջ իրենց զօրաւոր կուսակցութիւնները ունենալով:

Պատրիարքական պայքարները այդ երկու քաղաքականութեան շուրջը կը մղուէին: Բարձրագիմէտս եպիսկոպոս Զամիչեան ակներև ներկայացուցին էրզրութանին անձնատուր ըլլալու ծրագրին. խորէն եպիսկոպոս Նար-Պէյ Ներսէս պատրիարքին քաղաքականութեանը յարեալ և զայն շարունակելու սահմանուած եկեղեցականը կը համարուէր: Ուտի 1878էն ետքը ամէն անգամ որ պատրիարքական ընտրութիւն մը հաւանական կ'երևնար, այս երկու եկեղեցականները Ներսէս պատրիարքին ժառանգները կը ներկայանային: Ներսէս պատրիարք հրաժարականները միշտ ետ առնելով երկու ընտրելիներն ալ ետ քաշուելու հարկին մէջ կը գտնուէին: Իրենց անուանը շուրջը մղուած պայքարը սակայն ցոյց կուտար թէ երկու եպիսկոպոսներէն մէկուն յաղթանակն ու միտին պարտութիւնը քաղաքական երկու ուղղութիւններէն մէկուն յաջողութիւնը և միտին պարտութիւնը պիտի ներկայացնէ:

Երբ Ազգային ժողովը 1881 ին Ներսէս պատրիարքին հրաժարականը ընդունեց, թրքասեր կուսակցութիւնը հզօրացած երեաց: Կացութիւնը յանկարծ փոխուեցաւ Գէօրգ կաթողիկոսին վախճանմամբ: Սուլթանը արտակարգ մեծարանքներ շոյալեց Ներսէս պատրիարքին, նկատելով զայն իբր Հայոց ապագայ կաթողիկոսը:

Ներսէսականները սուլթանէն պատրիարքին ընծայուած յարգանքներուն մէջ անոր հետեւած քաղաքականութեան ազդեցութիւնը ուզեցին տեսնել, ուստի և ուժ զգացին Ներսէսի ուղղութիւնը անսուլթաք շարունակել տալու համար: Խորէն Նար-Պէյ ընտրութիւնն ալ երաշխաւորեալ համարուեցաւ:

Կաթողիկոսական ընտրութեան զանազան պարագաները նպաստաւոր եղան Նար-Պէյի պատրիարքական ընտրելիութեանը: Ներսէս պատրիարքին կաթողիկոսացմանը աշխատողներուն դիմաց կը կանգնէր զօրաւոր խումբ մը որուն մեծամասնութիւնը Խորիման Հայրիկը, և փոքրամասնութիւնը՝ Մուրատէօն Մեղիսեանի եպիսկոպոսը կ'ուզէին կաթողիկոս ընտրել: Կ. Պոլսոյ Ազգային ժողովը որոշեց կաթողիկոսական երեք ընտրելի ներկայացնել Էլմիածնի Համալուծար ժողովին: Երեք կուսակցութիւններէն իրաքանչիւրը կը փափաքէր իր ընտրելին Կ. Պոլսոյ թէ՛ եկեղեցական ժողովին, թէ՛ երեսփոխանական մարմինն ցուցակներուն մէջ առաջինը տեսնել: Ներսէսականներուն մեծ տկարութիւնը այն էր որ Պոլսոյ հաւաքուած եպիսկոպոսներէն ոչ մէկը իրենց կուսակցութեան կը պատկանէր կաթողիկոսական ընտրութեան մէջ: Ազգեցիկ եպիսկոպոսի մը անհրաժեշտ յակարէտ զբաղի ըլլալով, խումբ մը երեսփոխաններ որոնք Նար-Պէյին անձնապէս հակառակորդ էին, պարապրուս ունենալով հանդուցեալ Մերեմ-Դուրի Յարութիւնը, Նար-Պէյի խոստացան իրեն ապահովել պատրիարքական աթոռը, եթէ ինպատ Ներսէսի կաթողիկոսացման իր աշխատութիւնը նուիրէր: Խորէն եպիսկոպոս առաջարկուած սրայմանը ընդունելով մեծապէս նմանտեց այն յաջողութեան որով Ներսէս պատրիարք Կ. Պոլսոյ թէ՛ եկեղեցական և թէ՛ երեսփոխանական ժողովէն ներկայացուած ընտրելիներուն առաջինը հանդիսացաւ: Էլմիածնի գումարուած ընտրողական գերագոյն մարմինն 32 քուներէն 27ը Ներսէս պատրիարք ստացաւ: Թուրքական կառավարութիւնը իր վաւերացումը զլացած կատարուած գործողութեան: Ընտրութեան թեկնածուին յետոյ երբ պատրիարքը սրայրամի տօնին առթիւ Երլուզ գնաց շնորհաւորութեան համար, սուլթանը զինքը չընդունեց՝ «Թուսիոյ զեպանատունը խորհուած թուղթեր կ'ուսումնասիրեմ» յայտարարելով: Այս զէպքը ուրիշ առթիւ պատմած եմ, այժմ լոկ յիշատակութիւն մը բաւական կը համարիմ, պատրիարքական ապագայ ընտրութեանց վրայ ունեցած քաղաքականութիւնը հասկնելու համար:

Ներսէս պատրիարքին պատգհանն այս անսպասելի փորձանքը հարուած մը եղաւ իր քաղաքականութեան կուսակիցներուն, որոնց հակառակորդները սկսան բարձրագոյն յայտարարել թէ «Ահա փորձով կը տեսնուի որ թէ՛ սուլթանին և թէ՛ Եւրոպայի միանգամայն յարիլ կարելի չէ. կ'ամ մէկը, կ'ամ միւսը» Ներսէսի քաղաքականութեան օգտակարութիւնը անսպասելի զիպոլթաթով սկսաւ երկբայական դառնալ: Գուտի եւ Նար-Պէյի

պատրիարքական ընտրելութեան խնդիրն ալ հիմնական փոփոխութիւն կրեց:

Ու ճակատագրական գոյնազոյնութիւնը որ Նար-Պէյի շուրջը միշտ հիւ կուգար այս անգամ ալ ծանրապէս հարուածեց խեղճ եպիսկոպոսը:

Երբ Ներսէս պատրիարք Երլտըզի պալատէն ճարտուեցաւ, քանի մը շաբաթ ետքը յանկարծ նամակ մը կը ստանար սուլթանին անձնական բժիշկ Մալրոյէնի փաշայէն, որ կ'իմացնէր թէ «սուլթանը իրեն նկատմամբ բարեացակամ տրամադրութիւններ ունի, քիչ օրէն զինքը մասնաւոր ունկնդրութեան պիտի ընդունի, եւ կ'ուզէ զինքը Հայոց պատրիարք տեսնել»: Նամակը շաբաթ իրիկուն մը կը հասնի պատրիարքին. միւս օրը, կիրակի, Օրթագեղի աղաներուն խումբը, ըստ սովորութեան, կ'այցելէ պատրիարքին: Ներսէս ուրախութեամբ անոնց ցոյց կուտայ ստացած նամակը, որ ֆրանսերէն զըրուած էր, Մոնսէնէէօր տիտղոսով: Պատրիարքը Մալրոյէնի փաշային զեկուցումէն շատ սուրբ կը բայց կէտ մը միայն մտի կը մնար, այն էր «սուլթանը կ'ուզէր զինքը պատրիարք տեսնել»: -- «Բայց մի՞թէ պատրիարք չե՞մ» կը հարցնէր՝ զարմացած: Հիւրերն ալ նամակը առանձինն առանձինն կը կարդան և այդ տողը մեկնելու անկարող կը գտնուին: Ներկաներէն մին, Պ. Մ. Ճ., մէկէն ի մէկ լուսաւոր գազափար մը կ'ունենայ: Նամակին պահարանը կ'ուզէ տեսնել: Կողովն կը նետուած Պատրիարքը առանց հասցէին նայելու նամակը բացած էր, եւ պահարանը նետած: Երբ կը գտնեն զայն, վրան Նար-Պէյ խորէն եպիսկոպոսին հասցէն կը տեսնեն: Սխալմամբ Ներսէսին եկած նամակ մըն էր. ու այդ սխալումին պատճառը ետքէն հասկցուեցաւ: Մալրոյէնի փաշան նամակը սպառաւորին տուած է եղեր, ըստ սովորութեան «Մոնսէնէէօրին տար» ըսելով: «Մոնսէնէէօր»ը միշտ Նար-Պէյն էր, որ Պէշիքթաշ կը բնակէր. բայց յորմէ հետէ պատրիարքը հաստատուած էր Օրթագեղ, որ Պէշիքթաշին կից է, Մոնսէնէէօր ըսելով Ներսէսն ալ կը հասկցուէր. ու սպասաւորը շփոթութեամբ այդ նամակը փոխանակ Նար-Պէյին՝ Ներսէս պատրիարքին տունը կը տանի:

Մալրոյէնի փաշային թղթակցութիւնը երևան կը բերէր իր պատրիարքական ընտրելութեանը համար Նար-Պէյին պատրաստութեանց գաղտնիքը: Պատրիարքը սուս որ Պեղլին գացող երկու պատուիրակներէն մէկն էր, սուլթանէն ալ յարգուելով կը յուսար Ներսէս պատրիարքին շարունակութիւնը հանդիսանալ ազգին առջեւ: Սուլթանին սիրելի Մալրոյէնի փաշան, որուն մտերմութիւնը Նար-Պէյին հետ հանրաժանօթ իրողութիւն մըն էր, բարեխօսի գերը կը կատարէր:

Հասցէն նամակին գաղտնիքը պարզած ըլլալով, Ներսէս պատրիարք, արդէն հիւանդ, ու միշտ Նար-Պէյի ղեմ ատելութեամբ լեցուած, ջղոտ զգանութեամբ կը յայտնէ իր զգացումները: Այցելու ազաններէն ոմանք որ Նար-Պէյին հակառակորդներ էին, մեկնելով պատրիարքին քովէն, անվիշապէս Օրթագեղ տարածեցին եղբուրթիւնը,

որ ինքնին նշանակութիւն չունէր սակայն: Բայց սրտածրամիկ նկարագրութիւն մը ըրին պատրիարքին ունեցած սպաւորութիւններուն մասին: Հեազհետէ լուրը տարածուեցաւ. լրագիրներէն ոմանք ակնարկութիւններ ըրին, եւ հանրային զգացումը Նար-Պէյի դէմ սիտաւ գրգռուի: Երբ քիչ ետքը Ներսէս պատրիարք վախճանեցաւ, նամակին գոյնազոյնութիւնը արդէն ծանր հարուած մը տուած էր խորէն փոփոխութեան պատրիարքական ընտրելութեանը: Ու այն խումբը որ Ներսէսի կաթողիկոսացման պարագաներուն առթիւ պատրիարքական աթոռը Նար-Պէյի խոստացած էր, պատրուակ մը կը գտնու խոստացողութեան. ուստի եւ անխղճօրէն շահագործից նամակին միջազէպը:

Ներսէս պատրիարք երբ 1884 հոկտեմբեր 23 ին վախճանեցաւ, պատրիարքական միակ լուրջ ընտրելին կը մնար Չամիչեան Բարթողիմէոս եպիսկոպոսը, Չերմթըքասերներուն պետը. իսկ առանց հակակարծիք երեսփոխանները անգլուխ էին: Ասոնք, որ Պեղլինի վեհաժողովէն ետքը գրեթէ ազգին ամբողջութիւնը կը ներկայացնէին, ու քանի մը տարի յետոյ ալ մեծամասնութիւնը միայն, հիմակ շատ տկարացած էին, վեց տարուան ապարդիւն սպասումէ յետոյ: Բայց այդ կուսակցութիւնը կը ջանար որ գոնէ Բարթողիմէոս եպիսկոպոսը Հայոց պատրիարք չհռչակուի: Այդ միջոցին ազգային երեսփոխանութեան մէջ «յառաջդիմական» անունով կուսակցութիւն մը կազմուեցաւ, պետ ունենալու նախը հանգուցեալ Յարութիւն Մերեթ-Գուլին: Այդ կուսակցութեան անգամներէն ոմանց մէկ զումարումին մէջ Յարութիւն Մերեթ-Գուլի յանկարծ պատրիարքական ընտրելի առաջարկեց վեհապետեան Յարութիւն եպիսկոպոսը, Էրզրումի նախորդ առաջնորդը, որ Երուսաղէմի վանքը քաշուած կ'ապրէր, ու Պոլիս արի հիեղեցականի մը համբաւը կը վայելէր: Այս առաջարկին ղեմ եւ միայն խօսեցայ, առարկելով որ Երուսաղէմի Եսասի պատրիարքը ծանրապէս հիւանդ է, առանց առողջանալու՝ և է յոյսի, և Յարութիւն եպիսկոպոս Երուսաղէմի պատրիարքութեան էն յարմար անձնատուութիւնը կը համարուի. ուստի անպատեհ էր կարճ ժամանակամիջոցի մը համար զինքը Պոլիս բերել: Բայց Մերեթ-Գուլի ջերմօրէն պաշտպանեց իր ընտրելին, յայտարարելով թէ Եսայի պատրիարքը կրնար զեռ երկար ատեն ապրիլ, իր հիւանդութիւնը արդէն նոր չէր: Յարութիւն եպիսկոպոսին ընտրելութիւնը ընդունուեցաւ ամէնէն. բարթողիմէոսեաններէն շատերն ալ յարեցան այս անունին. և վեհապետեան եպիսկոպոսը երեսփոխաններուն գրեթէ երեք քառորդին քուէով Հայոց պատրիարք հռչակուեցաւ: Սակայն նորընտիր պատրիարքը երբ Պոլիս եկաւ ու պաշտօնը ստանձնեց, քիչ մը ետքն ալ Եսայի պատրիարքին վախճանման լուրը հասաւ: Գիշահոլութիւնը արդէն կը տիրէր Յարութիւն պատրիարքին ղեմ, ու նաև յայտնի էր թէ ծերունի եկեղեցականը ամենամեծ յարմարութիւն ունէր Երուսաղէմի աթոռին համար, հետեւ

ւարար զինքը Երուսաղէմի պատրիարք ընտրելու խորհուրդը ուժ գտաւ: Բայց միևնոյն ժամանակ հասկցանք զազանիքը թէ ինչո՞ւ Ներսէսի մահէն յետոյ յառաջիմականներուն պետը եւ անօրէն մարմինը Կ. Պոլսոյ պատրիարքութիւնը վերապահած էին Յարութիւն եպիսկոպոսին:

Եսայի պատրիարքին մահուան լուրը Պոլիս հասնելէն քիչ ետքը Մերեճ-Գուլի եւ իր պաշտօնակիցները սկսան փոփալ թէ Երուսաղէմի աթոռին արժանաւորագոյնը Սէֆէրեան Սիմոն եպիսկոպոսն էր, Երուսաղէմի պատրիարքական փոխանորդը Կ. Պոլիս: Փոփոսը կամաց կամաց բարձրաձայն շատագովանքի հասաւ, ու այդ խմբակը ա՛լ ակներև կ'աշխատէր Սիմոն եպիսկոպոսին համար: Հետզհետէ զանազան տեղեկութիւններ հաւաքելով ու միանգամայն ու շատեր հետամտելով սիմէոնեաններուն աշխատութեանցը այլեւ տարակոյս չունեցանք թէ 1885 ին ուզած էին Յարութիւն եպիսկոպոսը Կ. Պոլսոյ պատրիարքական աթոռը բռնել որպէս զի Երուսաղէմը լայնարձակ բաց մնայ Սիմոն եպիսկոպոսին առջև: Ս. Յակոբեանց վանքին ձեռնասուն էֆէնտի մը, սիրելի մը տերիմն ու խորհրդակներ Սիմոն եպիսկոպոսին, միջնորդ հանդիսացած էր Մերեճ-Գուլիի ու Երուսաղէմաւան միջև: Իսկ միջնորդն ալ յառաջիմականներու անօրէն մարմինն անդամներէն էր ու երեսփոխանութեան մէջ ալ քիչ շատ ազդեցիկ: Ասոնք, օգտուելով հանգամանքներէն, յաջողուցած էին վեհապետեան Յարութիւն եպիսկոպոսին ընտրութիւնը, ու հիմա Սիմոն եպիսկոպոսին յաղթանակը ապահովելու կը հետամտէին: Մեզի համար միևնոյնն էր թէ Երուսաղէմի պատրիարքը ո՞ր եպիսկոպոսը պիտի ըլլար, վանական միաբանութեան փափաք սձը պէտք էր ընարուեր Ազգային ժողովէն. բայց ինչ որ մեզի համար անհրաժեշտ էր՝ այդ Յարութիւն պատրիարքին Կ. Պոլսէն հեռացումն էր. իր պաշտօնը վարութիւնը ընդհանուր գծով իրեն առաջ բերած էր. պատրիարքական փոփոխութիւնը առանց ցնցումի յաջողցնել կը փափաքէինք: Երուսաղէմի միաբանութեան ընտրութիւնը կատարելապէս համապատասխանեց մեր այս ծրագրին. Յարութիւն եպիսկոպոս վեհապետեան վանական ընդհանուր ժողովէն առաջին ընտրելի հանդիսացաւ: Այդ ընտրութիւնը զիրացուցած էր Կ. Պոլսոյ և Երուսաղէմի աթոռներուն շահերը իրարու չզոհելու հնարաւորութիւնը. ուստի Ազգային երեսփոխանութեան առջև իր պարտականութիւնը գծուած էր: Յառաջիմականներու վարիչ մարմինը յուզուեցաւ, և ահա հերձուածը մտաւ այդ կուսակցութեան մէջ:

Այդ կուսակցութեան կարճատեւ կեանքին պատմութիւնը գրելու առիթը չի ներկայանար առ այժմ. կարճ յիշատակութեան մը պէտքը կը տեսնեմ միայն: Քանի մը երիտասարդներ 1885 ին նոր կը մտնէինք երեսփոխանութեան մէջ. նախորդ սերունդներուն պատկանող ժողովականները շատ մօտէն գեռ չէինք ճանչցած, պատրիարքարանի շրջանակին պատկանող հանրային գործերուն ալ ուզղակի մասնակցած չըլլալով մեզի կը պակ-

սէին փորձառութիւնը եւ հիմնական տեղեկութիւնները: Մասնակցելով յառաջիմական կուսակցութեան, մենք աւելի զիտող, ուսումնասիրող էինք քան թէ ազդեցիկ անդամներ: Բայց հետզհետէ բաւական բան սորվեցանք. ու երբ Երուսաղէմի պատրիարքական ընտրութեան խորհուրդը ծագեցաւ, այլ եւս ձեռնհաս էինք չափաւորելու յառաջիմականներուն վարիչներուն ազդեցութիւնը. մեր զիմազրութիւնը անընկճելի էր, անօրէն մարմինն ալ ինքն իր ուժին վստահ: Պայքարը մղուեցաւ Ազգային ժողովին սրահը, լուս զսպուած զայրոյթով բուռարկութեամբ: Արդիւնքը ո՛չ մէկ ո՛չ միւս կուսակցութեան յաղթանակն էր. բուռները գրեթէ հաւասար բաժնուած էին: Երկրորդ բուռարկութեան մէջ յաղթանակը մեզի մնաց, և Յարութիւն եպիսկոպոս Երուսաղէմի պատրիարք հռչակուեցաւ, ըստ միաբանութեան բաղձանքին:

\* \* \*

Կ. Պոլսոյ պատրիարքին ընտրութեան նախապատրաստութիւններու ժամը հասած էր: Պահպանողական կուսակցութիւնը բարոյապէս տկարացած էր: Իր յոյսերէն թէև ո՛չ մէկը իրականացած էր անկեղծօրէն թրքասէր պատրիարքի մը պաշտօնավարութեամբը, բայց եւ այնպէս անյաջողութեան պատասխանատուութիւնը պարագաներուն կը վերադրէին, միշտ յուսադիր մնալով Բարթողիմէոս եպիսկոպոսին վրայ: Ազատականներուն տկարութիւնն այն էր որ պատրիարքական ընտրելի մը չէին կրնար ներկայացնել: Երեք եպիսկոպոս հայկական դատին պաշտպանութեան նուիրուած կը համարուէին. Խորիմեան Հայրիկ, Իզմիրլեան Մատթէոս եւ Խորէն Նար-Պէյ եպիսկոպոսները: Այս երեքէն ոչ մէկուն անուան շուրջը մեծամասնութեան մը բողոքուիլ հնարաւոր կը համարուէր: Խորիմեան իբր քաղաքական կասկածելի անձնաւորութիւն վանէն Պոլիս բերուած էր. Իզմիրլեանի դէմ Երլտըզի մէջ մասնաւոր սխալալուծիւն կար: Ներսէսեան քաղաքականութեան կողմնակիցները կը գծկամակէին այս երկու եպիսկոպոսներէն մէկը ընտրել, վախնալով որ Երլտըզի դէմ ակներև հակառակութիւն մը կրնար Երրոպայի առջև վտանգել հայկական խնդիրը: Կը մնար Նար-Պէյը որուն դէմ թէ՛ պահպանողականները եւ թէ՛ ազատականները հաւասարապէս առարկութիւններ ունէին, շատը զուտ անձնական:

Շուարուժը կը տիրէր մեր մէջ. մեր տարտամութիւնը կ'ապահովէր Բարթողիմէոս եպիսկոպոսին ընտրութիւնը: Քանի մը երեսփոխաններ միանալով, ու Խրիմեան Հայրիկի, Սրուանձտեանց Գարեգին եպիսկոպոսի և ուրիշ քանի մը կարևոր անձնաւորութեանց խորհուրդն ալ առնելով, որոշեցին Նար-Պէյը ազատական կուսակցութեան ընտրելին ներկայացնել, իբր շարունակող Ներսէսի քաղաքականութեան: Երեսփոխանութեան մէկ մասը պահուած էր հրամարտութեանը, մահերով, բացակայութիւններով. Նուր-

եանի վարչութիւնը չէր ուզած վերանորոգել Ազգային ժողովը նոր ընտրութիւններով: Մենք հազիւ թէ տասը երեսփոխան կը մնայինք Նար-Պէյի ընտրելիութիւնը պաշտպանող: Որոշեցինք ամէն ջանք ընել նախ երեսփոխանութիւնը ամբողջացնելու եւ ապա ընտրութիւնը կատարել տալու:

Այդ միջոցին, 1887, Նուրբանի պաշտօնավարութեան ժամանակը լրացած ըլլալով Սիմոն պէյ յաջորդած էր, ամենաշեղծ կուսակից մը Բարթողիմէոս եւ պիտկոպոսին, որուն պատրիարքական ընտրութիւնը յաջողցնելու համար ո՛ր եւ է միջոցի առջեւ պիտի չընկրկէր: Սակայն վարչութիւնն ալ կը վախնար թէ այդ պակասեալ երեսփոխանութեամբ ապահովութիւն չկար Բարթողիմէոսի յաղթանակին. ուստի նոր ընտրութիւններ կատարել տալու հարկը զգաց: Միայն թէ բազմաթիւ սեղմումներ կը ջլատէին ազատականները: Այսպէս վարչութիւնը ուզելով սահմանադրութիւնը տառը տառին դորձադրել, վճռեց որ տարեկան 75 դահեկան ազգային տուրք չվճարողը պիտի չկրնար երեսփոխանական ընտրութեան մասնակցիլ: Հակառակ Պատրիարքարանին կողմէն յարուցուած խոչընդոտներուն մենք լաւ կազմակերպութիւն մը ունեցանք ու կարող եղանք նոր երեսփոխանութիւն մը մտցնել Ազգային ժողովին մէջ: Պահպանողականներն ալ սակայն բաւական յաջողութիւն ձեռք բերին:

Վարչութիւնը միեւնոյն ատեն պատրիարքական տեղապահ նշանակեց Սիմոն եպիսկոպոսը, Նար-Պէյի անունը դուրս ձգեց պատրիարքական յարմարագոյն ընտրելիներու հնգանուն ցուցակէն, եւ կառավարութեան միջոցաւ ձնշում բանեցուց Ազգային ժողովին վրայ դարձրեցնելու համար ներքին կանոնագիրը որուն տրամադրութիւնները դիրութիւն կ'ընծայէին ազատականներու շարքման:

Բարթողականները, այսինքն թրքամոլ կուսակցութիւնը զօրաւոր էր. իր գլուխը ունէր վարչութիւնը, իրեն նեցուկ ունէր ազգին հարուստ դասակարգին մեծամասնութիւնը: Գրեթէ ամբողջ մամուլը իրեն հետ էր, Արեւելեան Մառնոզիէն սկսած մինչեւ փունջ. Բարթողիմէոսեան կ'ին թրքաբարբառ հայ մամուլը, թիւրք թիւրքերը, Պոլսոյ ֆրանսերէն թերթերը. Արեւելք չէզոք կը մնար. իր վարչութեան վեց անդամներէն չորսը Բարթողիմէոսեան էին, եւ միայն երկուք էինք Նար-Պէյական, հետեաբար թերթը ո՛չ մէկ ո՛չ միւս կողմը կրնար հակիլ:

Ծանօթ, լաւ խօսող, ազգեցիկ երեսփոխաններուն ստուար մեծամասնութիւնը պահպանողական էր: Իրենց ատենաբաններն ու պարագլուխներն էին Յովհաննէս Նուրբան, Գարբիէլ Նորատունիեան, Սիմոն պէյ Մազսուս, Ստեփան փաշա Ասլանեան, Ռէթէոս Պէրպէրեան, Աւետիս Սարգիսեան, և ուրիշներ: Սակայն կը պակասէր իրենց վարիչ, կազմակերպող գլուխ մը. Ստեփան փափազեան վախճանած էր ու Յարութիւն Մըրեթ-Գու-

լի չէզոքացած, հետեաբար Բարթողականներուն կը պակասէր մէկը որ զիրենք ուղղէր խորհրդարանական ճակատամարտին մէջ:

Ազատականները երեսփոխաններու թուահամարն ընելով տեսան թէ լաւ կազմակերպութեամբ մը կարելի պիտի ըլլար մինչեւ հինգ ձայնի մեծամասնութիւն մը ապահովել, եթէ կարգ մը երեսփոխաններ ո՛չ մէկ ո՛չ միւս կողմը քուէարկէին: Ժողով գումարելով որոշեցինք կարգապահ ուղղութեամբ աշխատիլ. այս նպատակաւ ընտրեցինք հինգ անդամ բաղկացած մասնախումբ մը որուն յանձնուեցաւ ընտրողական պայքարին վարչութիւնը: Առանց ո՛ր եւ է ազմուկի, խոր լուծեան մէջ պատրաստութիւնները տեսնուեցան: Բարթողիմէոսեաններու առջև միշտ յուսահատ, լքեալ, տկար կը ձևանայինք, որպէս զի չզրգոտին եւ զօրեղ կազմակերպութեան մը անհրաժեշտ պէտքը չզգան: Ընտրութեան նախընթաց օրը պահպանողականներու պարագլուխները համոզուած էին թէ մենք 16 ձայնէն աւելի չունինք, այս թիւին ալ հաւտացողները քիչ էին:

Սեպտեմբեր 9, ուրբաթ օր, ամենքս ալ ժամադիր եղանք Մայր-Եկեղեցին, ազգային ժողովին գումարման տաճարը: Բայց ահա դժբաղդութիւնները կը սկսին: Երկու երեսփոխան որ մոլեռանդ Նար-Պէյական էին շատ տարիներէ ի վեր, ահա այդ օրը անսպասելի դիպուածով մը կ'արգիլուին ժողովին գալէ: Մենէ ոմանք կը խարսին պահպանողականներէ թէ նոյն օրը ժողով պիտի չըլլայ, ու Ղալաթիայէն Գում-Գաբու չին անցնիր. ու նոյն օրը Խրիմեան Հայրիկին ատենաբանութիւնը ենթադրել տուաւ թէ պատրիարքական ընտրելի կը ներկայանայ, ուստի եւ քանի մը քուէ ալ իրեն տըրուեցան:

Երբ քուէհամարը սկսաւ Նար-Պէյ եւ Բարթողիմէոս անունները անպազար իրարու կը յաջորդէին, ի մեծ ապշութիւն պահպանողականներուն: Արդիւնքը եղաւ 39 քուէ Բարթողիմէոսին, 36 Նար-Պէյին, 13 Ալքաթանին, 5 Հայրիկին և մէկ երկուք ալ ցրուած: Ո՛չ ոք բացարձակ մեծամասնութիւն չահած էր, ուստի երկու առաւելագոյն քուէ ստացողները համեմատականի պիտի մնային յաջորդ ուրբաթ կատարուելիք ընտրութեան:

Քուէարկութեան արդիւնքը մեծ յաջողութիւն մըն էր ազատականներուն համար: Թրքասերները իրենց բոլոր ուժովը հազիւ թէ 3 քուէի առաւելութիւն մը ձեռք բերած էին, ան ալ դիպուածին շնորհիւ:

Համեմատական քուէարկութեան համար անհրաժեշտ չէ երեսփոխանի մը անձամբ ժողովարարը ներկայութիւնը. քուէն կարելի է փակ պահարանով ալ խրկիլ: Որպէս զի դիպուածին բան մը չթողուի, շաբաթ օրը գումարուելով որոշեցինք բոլոր քուէները նախապէս հաւաքել, պահել քովերնիս և ամէնը մէկտեղ տանիլ ժողովատեղին. նոյն օրը ներկայ գտնուողները անձամբ կրնային մասնակցիլ, իսկ ո՛ր եւ է պատճառաւ բացակայ

եղողներունը քովերնիս ապահովեալ կը մնար:

Յաջորդ օրը խաչի տօնը ըլլալով երկու օր Ղալաթիա չեկանք. երեքշաբթի առտու երբ հաւաքուեցանք, ահա՛ Նար-Պէյի հրաժարականը ներկայացուեցաւ: Չոր ուզեր ընտրելի ըլլալ: Չարմացած մնացինք: Որոշեցինք գաղտնի պահել այս լուրը և իբր չեղեալ նկատելով մեր գործը առաջ տանիլ: Հագիւ թէ իրարմէ բաժնուած կինք և ահա իմացանք թէ այդ հրաժարականին լուրը Ղալաթիա և Սթամպուլ տարածուած էր, հանդերձ մանրամասնութիւններով որոնք ստուգուեցան: Խաչին երկուշաբթի օրը խորէն եպիսկոպոս Նուրեան Լֆէնտիին երթալով իր ընտրութեան մասին խորհրդակցեցր էր, և համաձայնութեամբ որոշեցր կին այդ հրաժարումը: Նար-Պէյի յայտն է եղեր որ իր հրաժարականը Ազգային ժողովին մերժուելով ինքն ալ կուսակցական ընտրելի ըլլալէ կը զազրի և ազգային ընտրելի կը հանդիսանայ:

Լուրը գաղտնի պահել անկարելի էր. ազդեցութիւնը շատ գեշ եղաւ: Յուզում, զայրոյթ, շփոթութիւն ամէն կողմ տիրեց: Այլ ևս չլատուած կինք, աշխատելու անկարողութեան գատապարտուած: Մեր կուսակցութեան պատկանողներէն սմանք տհաճած կին, ու բացարձակօրէն կը մերժէին իրենց քուէն տալ եպիսկոպոսի մը որ Նուրեանին հետ յարաբերութիւն կը հաստատէր: Ու ահա Աշրգեանին 13 քուէ տուողներէն անոնք որ խոստացեր կին համեմատականին մէջ միանալ մեզի, եկան յայտնել թէ Նար-Պէյի հրաժարականը թէ որ մերժէինք՝ իրենց մեզի հետ պիտի չըուէարկէին: Տեսանք թէ հնար չկար, խորէն եպիսկոպոս չհնազանդելով կարգապահութեան՝ ինքն իր ձեռքովը կը քանդէր իր տունը և բացը կը թողուր ազատական կուսակցութիւնը: Հասկցանք թէ այլ ևս Նար-Պէյը ընտրել անկարելի պիտի ըլլայ. մենք իսկ պաղած կինք այդ դիմումին պատճառաւ: Եւ սակայն յանկարծակիի եկած կինք ամիսներու աշխատութենէ վերջը: Ի՞նչ ընել: Առաջին մտածելու խնդիրն էր օրինաւորապէս արդիւի Բարթոլոմէոսին անմիջական ընտրութիւնը, և ժամանակ չահել: Կրկին գումարուեցանք և որոշեցինք Նար-Պէյի հրաժարականը ընդունելով սեպտեմբեր 9ի ընտրութիւնը ամբողջովին բեկանել և նորէն քուէարկութիւն կատարել:

Խորէն եպիսկոպոսին հրաժարականը սակայն երկդիմի էր, և իր բառերուն վրայ հիմնուելով չէինք կըրնար զինքը հրաժարեալ նկատել: «Կ'աղաչեմ մի՛ ընտրէք զիս, չե՛մ ուզեր կուսակցական պատրիարք ըլլալ» զրած էր: Այս բացատրութիւնները կրնային մեկնութիւն վերցնել, և հրաժարական չհամարուիլ, և որովհետեւ այլ ևս ազատական կուսակցութիւնը տկարացած էր, Նար-Պէյին հրաժարականին մերժումը կ'ապահովէր թրջասէրներու յաղթանակը: Ինծի յանձնուեցաւ վճռական հրաժարական մը խմբագրել և ստորագրել տալ: Սեպտեմբեր 16 ուրբաթ առտու, երթալով Նար-Պէյին, իր քուէ իսկ խմբագրեցի իր հրաժարողի:

Ընդդիմացաւ, չէր ուզեր ստորագրել. «Բայց ես չեմ հրաժարիր, ես կուսակցական պատրիարք ըլլալ չեմ ուզեր միայն» կ'ըսէր, աչքերը արցունքով լիցուած, վըշտահար տխուր դէմքով: Շատ ուշ էր: Օրինակեց, ստորագրեց հրաժարականը, զոր անմիջապէս Արևելք տար, ժողովին գումարումէն առաջ: Բնագիրը տարի յանձնեցի Ազգային ժողովին ատենապետ Տըթ. Թիրեաքեանի:

Ատենանը բացուելով ատենապետը երբ սկսաւ Նար-Պէյի հրաժարականը կարգալ, հակառակորդ կուսակցութիւնը բորբոքեցաւ. Պ. Աւետիս Սուրէնեան փաստաբանը ցատքեց աթոռէն և հրաժարողիը կորզեց ատենապետին ձեռքէն, որպէս զի ընթերցումը չլարունակուի: Ազատականները սաստկապէս բարկացան այս յանդերձնութեան դէմ, ու քիչ մնաց Պ. Սուրէնեանը ժողովէն դուրս պիտի հանէին: Ընթերցումը սակայն շարունակուեցաւ. Նուրեան Լֆէնտի տեսնելով որ իր խմբագրած հրաժարողիը չէ՝ սաստիկ կատգեցաւ, ու միևնոյն ատեն ժողովրդէն լսուած ձայներն ալ զինքը զայրացուցին: Իր աթոռէն ելլելով իմ քովս եկաւ. այդ պահուն իմ եւ իր միջեւ տեղի ունեցած միջադէպը ժողովին նիստը խանգարեց, ու ատենանը փակուեցաւ:

Այլ յայտնի էր թէ Նար-Պէյի հրաժարականովը սեպտեմբեր 9ի ընտրութիւնը պիտի բեկանուէր: Բարթոլոմէոսեանները դժուար կացութեան մէջ ինկան: Պ. Սուրէնեան և ուրիշ երեսփոխան մը խորհուրդ խնդրելու համար կը դիմեն Նուրեան Լֆէնտիին որ իրենց խրատ կուտայ զի մաղրել բեկանումի ո՛ր և է առաջարկի: Իսկ եթէ ժողովը բեկանումը վճռէ, իրենք պէտք էր դիմէին կառավարութեան, բողոքելով սահմանադրութեան բռնաբարումին դէմ: Այսպիսի պարագաներու մէջ ինչդիրը կը յղուի Պետական խորհրդին, որուն օրէնսդրական ձեւը յետ քննութեան որոշում կուտայ: Ինքը Նուրեան այդ ճիւղին անդամ ըլլալով բնականաբար վճիռը իրենց կուսակցութեան նպաստաւոր պիտի ըլլար: Պատգամաւորները կը հաւանին այս ծրագրին, և իրենց կուսակցութիւնը, թէ՛ այս խոստումներուն, թէ իրենց թիւին վրայ յուսադիր, հանդարտ կը սպասէին յաջորդ նստին:

Բարեկամ երեսփոխաններու խումբ մը եկան խնդրեցին ինէ ներկայ չգտնուիլ պատրիարքական ընտրութեան համար գումարուելիք ժողովին: Նուրեանի և իմ միջեւ նոր ընդհարում մը անխուսափելի կ'երեւնար իրենց, ու հետեւանքները պիտի ըլլային երկու կուսակցութեանց բաղխումը, ինչ որ վտանգաւոր կը համարէին պատրիարքական ընտրութեան, նոյն իսկ սահմանադրութեան պահպանումին համար: Իմ առարկութիւններու խորհրդաւոր ժպիտով մը պատասխանեցին. «Վստահ եղիք որ վաղը Բարթոլոմէոսը պիտի չընտրուի. նոր բաներ կան զոր վերջէն կ'իմանաս»: Համակերպեցայ ինծի եղած առաջարկին, ու բացակայ գտնուեցայ պատրիարքական ընտրութեան նստէն:

Նոյն օրը ատենանը բացուելուն Ստեփան փաշա

Արարանն, Պ. Սուրենյանն եւ ուրիշներ պերճախօս լեզուով կը պաշտպանեն Բարթողիմէոսի անձը եւ բեկանումի մը չզօհուելու իրաւունքը: Սակայն զժուար է գաղափար մը տալ այն ապշութեան վրայ որ ամէնուն վրայ կը տիրէ, երբ Բարթողեաններու պարագլուխներէն Նուրեանն եւ ուրիշ մէկ երկու էֆէնտի խօսք անելով կը պաշտպանեն բեկանումին առաջարկը, ինչ որ Բարթողիմէոսը զոհել կը նշանակէր:

Այդ յանկարծական փոփոխութեան պատճառը հետեւեալն է: Սեպտեմբեր 16ի նստին մէջ պատահած զեպքը Բարթողականները հրատարակեցին Պոլսոյ բոլոր թերթերուն մէջ, զիս այսպանելով, նախատելով: Դատական գործերու նախարար Ճէլաթէթ փաշա այս պատմութիւնը կարդալով թարթիթի մէջ կ'օւզէ մանրամասն տեղեկութիւն ստանալ, եւ կը կանչէ հայ դատաւոր մը բացատրութիւններ ուզելու համար: Դատաւորը Բարթողիմէոս եպիսկոպոսին անձնական թշնամին ըլլալով առիթէն կ'օգտուի յայտնելու թէ «Պրուսայի առաջնորդը զիս պատրիարք չեղած ահա ազգին մէջ կոխը կը սկսի իսկ եթէ ընտրուի, ա՛լ կարելի չէր զուշակել թէ ինչեր պիտի պատահին»: Փոշան կը սկսի պոռալ: Օ՛րմաւրն, Օ՛րմաւրն, (թող չըլլա՛յ, թող չըլլա՛յ): Եղելութիւնը կը տեղեկագրէ ուր որ պէտք է, եւ հրահանգ կուզայ թէ «քանի որ խոտիութիւն պիտի ծագի Հայոց մէջ Բարթողիմէոսի ընտրութեամբ, թո՛ղ չընտրուի»: Եւ արդարեւ Բարթողիմէոսի զէմ ո՛ր է ցոյց ուղղակի հակահառափարական պիտի համարուէր: Այս հրահանգը կը հաղորդուի Դարան հայ էֆէնտիներուն, որոնք անմիջապէս զրօշակներն կը փոխեն: Ահա այս էր այն նորութիւնը որուն մասին ինծի ակնարկութիւն եղած էր նախորդ օրը: Պըշտիկ շրջանակի մը մէջ միայն կը մնար այս դարձուածը, մինչև իսկ Ստեփան փաշա անտեղեակ էր:

Նուրեանի եւ ընկերներուն դարձը վերջնապէս կը շարժախէր Բարթողեան կուսակցութիւնը, որուն պատկանող երեսփոխաններէն մաս մը նոյն օրուան նստին մէջ կը միանային նախկին Նար-Պէյակահաններուն որպէս զի համաձայնին նոր ընտրելիի մը վրայ, եւ ազգը ներքին երկպառակտումներու չմատնուի: Սեպտեմբեր 9ին Ալըզեանին համար քուէարկող 13 երեսփոխանները իրենց ընտրելին կ'առաջարկէին: Արմաշի վանահայրը չէզոք անձ մը ըլլալով իր ընտրութիւնը ո՛չ մէկուն յաղթութիւնը կամ պարտութիւնը կրնար համարուիլ, հետեւաբար խորէն եպիսկոպոս Ալըզեան քուէներու ստուար մեծամասնութեամբ մը պատրիարք հռչակուեցաւ:

Ալըզեանի պաշտօնավարութեան մասին այս էջերուն մէջ երկու տարի առաջ խօսած եմ: Հաւանօրէն օր մը այդ շրջանին վրայ շատ աւելի ընդարձակօրէն գրելու առիթը կ'ունենամ:

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

ՅԵՂԱՓՈՒՈՒԹԵԱՆ ՄԱԿԱՐՈՅԾՆԵՐԸ

ՀԱԿԱՅԵՂԱՓՈՒԱԿԱՆԸ

Խորագիրս տեսնելով զուցէ քիչ մը զարմանաց թէ ինչպէս հակայեղափոխական մը դրած եմ յեղափոխութեան մակարոյծներու շարքին մէջ: Ընդհակառակը շատ բնական է կարծեմ յեղափոխութեան մակարոյծները նըկատել այն տեսակ մը տիպարները որոնք 96էն ի վեր մէջտեղ ելած են եւ որոնք յեղափոխութիւնը շատագոյնով զայն շահագործելէ ետքը, հիմակ սկսած են յեղափոխութեան հակառակորդ ձեւանալով ապրիլ, տեսնելով որ այդ միջոցը աւելի շահաբեր է: Արդ, առանց յեղափոխական շարժման գոյութեան՝ այդ մարդիկը չը պիտի կրնային իրենց գերը խաղալ եւ մտնել այն մարդոց աչքերը որոնց զրպանէն սրտած են ապրիլ մինչև ետքը: Կը փափաքեիմ այդ կարգի մակարոյծներէն ձեզ ներկայացնել նմայշ մը միայն:



Նախկին վարժապետ մըն է Պ. Միսաք որ Եւրոպա կ'ապրի իր նախկին աշակերտներու ճնողքներուն՝ որոնք վաճառական են՝ ողորմութեամբը:

Հայերէնի ուսուցիչ՝ այնչա՛փ միաբը խնդած է լեզուաբանական նրբութիւններով որ ա՛լ կարծես քերականայան օրէնքները ազգած են իր նկարագրին վրայ: Բայի մը պէս կ'եղանակառորոշի ժամանակներու համեմատ, գոյականի մը պէս կը հռչակուի, տէր-բային հետ համաձայն է՝ երբ տէր-բային վաճառական մըն է, միշտ ներկայ ընդունելութիւնն է երբ դրամ տալու էրթան իրեն եւ շացաւական մասնիկ՝ երբ դրամ ինչորեն իրմէ: Ասկէ գատ, հայելի-մարդ մըն է որ կը ցոլացնէ միայն իր վաճառականներուն պաղափարներն ու համոզումները, — հարուստ վաճառականի մը սաւունին յղկուն, մաքուր, անարստ հայելին, որուն վրայ փոշի մը չես կրնար գտնել, որ բիծ մը չունի: Երբեք հակասութեան մէջ չէ իր զեմը կեցող վաճառականին հետ, ճիշդ ա՛նոր մօրուքը, անոր հազուամները, անոր ձեւերը կը պատկերացնէ, ստրուկ հաւատարմութեամբ մը:

Իր միակ անձնական սկզբունքը կրնանք բանաձեւել սա կերպով.

«Ամէն բանի ժամանակ կայ, յեղափոխական ըլլալու ժամանակ եւ հակայեղափոխական ըլլալու ժամանակ. սողալու ժամանակ եւ խայթելու ժամանակ. ճառ խօսելու ժամանակ, եւ հանդանակութիւն ընելու ժամանակ. Մանչէսթըր երթալու ժամանակ եւ Մանչէսթըրէն ետ դառնալու ժամանակ. նախ տիրեցնէր ընդունելու ժա»

մանակ և նախատինքները մարտելու ժամանակ. ստակ մուրալու ժամանակ և ստակը պանքան զնելու ժամանակ. նախ զվաճառականները խնկարկելու ժամանակ և մանիֆաթուրայի վաճառականները փառարանելու ժամանակ:»

Ու հաւատարիմ իր սկզբունքներուն ու իր կոչումին, տարիներէ ի վեր նարպոսի ու քրքումի պէս կը վառի անիկա՝ անուշաբոյր՝ այն կուռքերուն առջեւ որոնց պատուանդանն են մանիֆաթուրայի կապոցները:

Ամիրաներու ժամանակին պատուելին է ան, տիրացուի, հացկատակի, սպասուորի ու վարժապետի վարնոց խառնուրդ մը, որ աղային շուպուխը կը վառէ, արզոցը այբուբէն կը սորվեցնէ, ծառաներուն հետ կեւրակուր կ'ուտէ ու սէխին կնոջը կը քծնի: Աղային տունախմբեան ուղերձ կը գրէ, երբոր զաւակը ամուսնացնէ՝ հարսները կը գրէ, երբոր զաւակը մեռնի՝ ողբերգ կը գրէ, ու այսպէս կ'ապրի:

Պ. Միսաք, ինչպէս ըսի, անմիջական շարունակութիւնն է այդ տիպարին. նոյն մարդը՝ տարբեր՝ երոպականացած տարագով: Անորդ հագի մը որուն համար ամէկ հարուստ՝ «պերճաշուք իշխան» ու «անզուգական բարերար» կամ «մարդասեր» մըն է, որուն համար ամէկ հարուստի կին՝ «չնաշխարհիկ ձիւրքերով օժտուած՝ զարդացեալ ու գեղանի հայուհի» մըն է, որուն համար ամէկ հարուստի զաւակ «խոստմնալից ու հանճարեղ պատանի» մըն է, որուն համար ամէկ հարուստի սպասուոր՝ «հաւատարիմ ու անձնուէր ծառայ» մըն է, որուն համար ամէկ հարուստի ձի «զեղաբաշ, փրփրերախ ու քաջալագ երիվար» մըն է, որուն համար ամէկ հարուստի կօշիկ՝ «նրբահիւս, վայելչաձեւ ու կակղաւորիմ» օտանաման մըն է:

\* \* \*

97ին կը երբ Պ. Միսաք չեմ զիտեր քանիբորոյ ատաքելութիւնն ըրաւ Մանչևուրը: Հազիւ քաղաք հասած՝ սկսաւ իր այցելութիւնները վաճառականներու գրասենեակը: Պ. Միսաք տասնըմէկ տարիէ ի վեր վարժեցօցած էր զանոնք տարին մէկ մէկ ոսկի վճարելու իրեն, ի փոխարէն այն գովեստներուն զորս պարբերաբար կ'ընէր անոնց, առ նուազն ամիւր անգամ մը: Սակայն վաճառականները ասով չէին զոհանար և իրենց վճարած այցելութիւն փոխարէն իրաւունք սնենալ կը կարձակէն նաև հսկելու իրենց պաշտպանեալին խօսքերուն ու գործքերուն վրայ, այնպէս որ Պ. Միսաք, ոսկին փրցնելէ առաջ, պարտաւոր էր իր մէկ տարւան խօսքերուն ու գործունէութեան հաշուհամարը իրենց հաւանութեանը ներկայացնել: Արդ, 97ի ատաքելութիւնը բաւական փշտաւ կը իրեն համար, որովհետեւ նախորդ տարին յեղափոխութեան շատագովը եղած էր, ընդհանուր հոռանքին հետեւելով ու քիչ մըն ալ քաջալերուելով նոյն այդ վաճառականներէն:

Հետեւիք իրեն իր մէկ քանի այցելութիւններուն:

Պ. Միսաք կը մտնէ գրասենեակ մը: Վաճառականը՝ սեղանի մը առջեւ նստակ կարդալու զբաղած է:

Պ. Միսաք զրանը քով, զլիարկը ձեռքը, ժպտուն կը սարսուէ որ ընթերցումը աւարտի: Վաճառականը՝ վերջապէս հաճելով նշմարել զինքը.

— Հա՛ դուն ես. նորէն եկա՞ր. նստէ՛ նայինք. (քիչ մը խիստ) խօսելիք ունի՞մ քեզի՛:

Պ. Միսաք կը նստի աթոռի մը ծայրը, աթոռին երեք չորրորդ մասը պարապ թողով:

Վաճառականը.— Ի՞նչ երեսով եկար, ծօ՛:

Միսաք. (միշտ ժպտուն).— Անցած տարւան երեսօլիս, հի՛, հի՛, հի՛...

Չմտնած ըսելու որ Պ. Միսաքի խօսակցութեան միակ աղն է բառաչաղներ ու րեքրեքեքներ, որոնք վաճառականներու շատ բռնափն կուզան երբեմն: Այդ շուկայի սրամտութեան Պ. Միսաք կ'ընկերացնէ ապուշ, անարտայայտիչ ծիծաղ մը, զոր հարուստներու քով «հի՛, հի՛, հի՛» ձեւով կ'արտաբերէ և ծանօթներուն քով «հա՛, հա՛, հա՛»:

Վաճառականը. (բարկութեամբ).— Աս վայեց եղածները... ետեպսիզուրբեան երեսն այնչա՛փ մարդ ջարդուեցաւ, ամէն բան տակնուվրայ եղաւ, առուտուրը զարկեցաւ...

Միսաք.— Իրաւունք ունիք, էֆէնտի, իրաւունք ունիք, միայն թէ՛ եթէ շնորհք ընէք որ...

Վաճառականը. (աւելի բարբոքած).— Ամենք ալ աւազակներ էք, գողեր էք, անբարոյական արարածներ էք...

Միսաք.— Շատ շիտակ է, էֆէնտի, բայց ներեցէք որ...

Վաճառականը.— Կատելու է, կատելու ձեռք պէս մարդիկը:

Միսաք.— Շատ ճշմարիտ է, էֆէնտի, բայց կը հաճիք որ պզտիկ...

Վաճառականը.— Անամօթ...

Միսաք. (պաղատազին).— Էֆէնտի, հանդարտեցէ՛ք, կ'աղաչեմ, ես ալ հասկցայ հիմա որ սխալ ուղղութեան կը հետեւիմ կոր եղեր, վստահ եղիք որ ձեր բոլոր արգարացի դիտողութիւնները, զորոնք ազնուութիւնը ունեցաք ինձի յայտնելու, նկատողութեան պիտի առնեմ և ըստ այնմ պիտի վարուիմ ասկէ ետքը: Ախ, էֆէնտի, խաբուեցանք. Սուլթանը «Բառուլ տ'օնէօն» տուաւ Սալլըպրիին որ հայկական խնդիրը պիտի կարչադրէ, ես ալ հաւատացի: Բայց յետոյ «Բառուլ տ'օնէօն» եղաւ... հի՛, հի՛, հի՛: Աս թիւրքերը ասանկ են... տեսէ՛ք Բարիք իրարու քռեփեղի կը նետեն, իսկ Պսլիս իրարու քռփղի կը նետեն... հի՛, հի՛, հի՛:

Վաճառականը. (զրգանէն ոսկի մը հանելով).— Ա՛... բայց ասկէ ետքը խելքդ զլուխդ ժողով... ատ ձեր անխելք ըրածներովը օլուտ մը չըլլալէ զատ, պարտապ տեղը մեր առուտուրին վնաս կ'ընէք կոր:

Միսաք. (զրամը զրգանելով).— Շատ իրաւացի, շատ

ճշմարիտ, շատ արդար դիտողութիւն մըն է ձեր ըրածը: Վստահ եղիք որ ամենաշուրջ նկատողութեան պիտի առնեմ... շնորհակալ եմ: Ձեր ազնուափայլ տիկնոջ ու սիրասուն զաւակներուն ամենախորին յարգանքներս, կ'ազաւեմ չմոռնաք հաղորդելու: Մնաք բարով:

Կէս ժամ ետքը Պ. Միսաք կը ներկայանայ ուրիշ զրասնեակ մը: Վաճառականը թիկնաթուփն մէջ ընկըլած՝ անդիտեմ թերթ մը կը կարդայ:

Միսաք, — Ձրադամ էք արդեօք, Լեֆէտի:

Վաճառականը, — Չէ՛. նստէ նայինք, նորէն բարա ուզելու եկար. տարի մը եղաւ:

Միսաք, — Եղաւ հապա. այս առտու ճիշդ տարին լրացաւ:

Վաճառականը, — Ինչ կայ չի կայ. (հեգնական) Սալպըրին կարգադրեց հայկական խնդիրը:

Միսաք, — Սալպըրի չէ, սայր պորոռ... հի՛, հի՛, հի՛:

Վաճառականը, (ինդալով), — Է՛յ Հանօթոն բան մը չըրա՛ւ:

Միսաք, — Ամօթուն ծածկուեցաւ... հի՛, հի՛, հի՛:

Վաճառականը, (ինքնահաւան), — Մենք ձեզի տաւ շուք ըսինք, միտիւ, ատանկ խայտառակ կերպով գործ չի տեսնուիր, Երոպան բան մը ընելիք չունի, պարապ աւզը առուտուրին մնաս կը հասցնէք կոր: Յեղափոխութիւնը զենքով կ'ըլլայ, Լեֆէտի, զենքով:

Միսաք, — Ետա իրաւացի է: Յաղթանակ տանելու համար յաղթ դանակ պէտք է... հի՛, հի՛, հի՛:

Վաճառականը, (միշտ հեգնական), — Մեր յեղափոխական պարանները ինչ ջուրի մէջ են, նորէն յեղափոխութիւն կ'ընեն կոր:

Միսաք, — Հիմակուհի մա տեղափոխութիւն կ'ընեն կոր... հի՛, հի՛, հի՛:

Վաճառականը, (զրասեղանին դարակէն ոսկի մը կը հանէ ու Պ. Միսաքի կուտայ), — Ինչ որ է, ասկէ ետքը խելքդ դուրսդ ժողովէ ու խոհեմ վարուէ, քեզ նայիմ, երթաս բարով:

Միսաք, — Ենորհակալ եմ, ձեր ըսածները խորին ուշադրութեան առարկայ պիտի ընեմ: Վստահ եղէք: Հաճեցէ՛ք, կը խնդրեմ, ամենախորին յարգանքներս մատուցանել ձեր ազնուափայլ տիկնոջ ու սիրասուն զաւակներուն: Մնաք բարով... ցանտութիւն:

Ու այսպէս այցելութիւնները կը շարունակուին մինչև իրիկուն ու յաջորդ օրերը:

Պ. Միսաք իր այս առաքելութեան միջոցին կը տեսնայ որ վաճառականները բոլորովին հակառակ դարձած են յեղափոխութեան եւ հեղափոխութեան ինքն ալ կ'ուզողէ իր ընթացքը:

\* \* \*

Անկէ ի վեր «հակաֵղափոխական» է, խօսքով, գործով, հաղուստով ու շարժումներով:

Յեղափոխականները կը հարուածէ, յեղափոխութիւնը «ապաժաման» կամ «տարաժաման» կը զտնէ, կարմիր

վզնոցի տեղ սե կամ մանիշակալայն վզնոց կը դնէ, ըրտէնկոթը կոճկած կը քալէ ու խօսած ժամանակ բարուիը նուազ կը շարժէ քան 96 թուականին սիլիզները:

— Ես արդէն Ներսէս Վարլապետեանի օրէն ի վեր հակառակ եմ յեղափոխութեան, կ'ըսէ այն հարուստներուն որոնց տունը կը ճաշէ երգեմ, մենք պէտք է ամէն ջանք ընենք որ զեղի առևտուրը չ'ըսուի, վաճառականութիւնը զարգանայ, երկրին վարկը բարձրանայ: Հո՛ն է մեր փրկութիւնը:

— Աֆիլիս, շատ ճշմարիտ է, կը պատասխանէ վաճառականը:

— Նաթըր օրչափ տարածուի ասիական զաւառներուն մէջ, այնչափ պիտի շուսաւորուին հայ զաւառացիները, կը շարունակէ Պ. Միսաք:

— Ետա շիտակ է:

— Ենթադրեցէ՛ք որ մանիֆաթուրայի խանութներ բացուին ամէն հայաբնակ գիւղերու մէջ, ինչ մեծ բարեք մը պիտի եղած ըլլայ մեր թշուառ եղբայրներուն համար, որոնք այսօր կիսամերկ կը պտըտին զգեստ չունենալուն:

— Ետա իրաւացի դիտողութիւն:

\* \* \*

Բայց չյուտահատինք իրմէ. այն օրն ուր նախն ու մանիֆաթուրան հաշտուին յեղափոխութեան հետ, պ. Միսաք մէջտեղ պիտի ելլէ կարմիր վզնոցով մը, ձեռքը բռնած զրիչ ու սուր ու «Չայնը հնչեց» պիտի երգէ:

ԵՐՕՏ

ՏԻԳՐԱՆ ԵՐԿԱԹ

Տարին կը փակենք, Պոլսէն եկած գոյմի մը արտուութեանը տակ: Մահը կը զարնէ հայ երիտասարդութեան էն ազնիւ՝ էն զեղեցիկ զէմքերէն մին: — Տիգրան Երկաթը:

Այս անունին տակ էր որ Կարապետ Պիլէզիքեան ֆրանսական գրականութեան մէջ նշանակելի անուն մը շինեց իրեն, Հայերը եւ իրենց դասը ծանօթացնելով Ֆրանսայի մէջ ու անկից դուրս: Մերիշներ որ փնքը աւելի մօտէն ճանչցան, այս սիւնակներուն մէջ պիտի գրեն իր գործունէութեանը մասին: Ես այս փոխադրուող զերուն մէջ որոնք ցաւին ժայթքումը ունին» պիտի ուզէի ի վեր հանել մարդը եւ գրագէտը որ կար անոր մէջ:

Ճշմարտապէս գերազանց անհատականութիւն մը եղաւ իրենը: Ինծի շատ քիչ արուած է տեսնել հայ ընկերութեան մէջ այն ազնուական շնորհը ու ազատակ վայելչութիւնը որ միացած էին իր մէջ: Չեմ զարմանար այն ընդունակութեանը որ իրեն կ'ըլլար ֆրանսական մտքին այսօրուան էն փայլուն ներկայացուցիչներէն —

Պատէն, Բօլ Ատանէն, Լէոն Տոտէն, օրինակի համար, որոնց մտերմութեանը մէջ ապրեցաւ: Անոնցմէ էր ինքը որոնք ու եւ է ընկերութեան մէջ անընտել չպիտի զգային իրենք զիրենք:

Ֆրանսա մեծցած ու հոն կրթութեամբ հոն սկսած էր նախ իր կեանքի զործունէութիւնը, — Ֆրանսացի մըն էր ինքը մտքով ու լեզուով: Իր ցեղը սակայն երբեք իր իրաւունքները կորսնցուցած չէր իր էութեանը խորը, որոնք զեղեցիկ թափով մը արթնցան մեր աղէտներուն հետ մանաւանդ: Պոլսէն արդէն ֆրանսական հանգէսներու կ'աշխատակցէր, ծանօթացնելով հայ միտքը: Յետոյ պահ մը մասնակցեցաւ իսկ շարժման որ ամբողջ իր ցեղը կը ցնցէր, — ու է. Պոլսոյ զեպպաններուն ուղղուած մէկ քանի յիշատակագրեր, զորոնք ինքը խմբաշրջած էր, զարմանքի ու հիացման առարկայ կը դառնային: Յետոյ Ֆրանսա անցաւ աւելի ընդարձակ սահմանի մէջ շարունակելու իր սկսած գործը, զոր Մոսկոյ Պատէս կ'որակէր հետեւեալ տպագրով Ժոզեֆին մէջ. «Նշանաւոր գրող մը, խանդավառ հայրենասէր մը, երիտասարդ Հայը որ Ռեվիտակ Ռեվիտի մէջ Տիգրան Երկաթ անունով կը ստորագրէ առաջնակարգ ուսումնասիրութիւններ» կային:

Իրացնէ նշանաւոր գրող մը կար իր մէջ, ֆրանսական նոր գրականութեան լաւագոյն ուղղութեամբ, իրերուն և երեւոյթներուն առջեւ հետադնող ու իմաստասիրող լայն ու ուժեղ հայեացքներով: Ֆրանսերէնի մէջ միայն կրցաւ արտայայտել իր տաղանդը: Հայերէն չէր գիտեր գրել, վերջէն սկսաւ սորվել, բայց անշուշտ ատիկա չէր կրնար բաւել իրեն՝ զայն տիրաբար զործածելու իբր հչու ու ճապով գործիք մը իր մտածումներուն թարգմանութեանը: Պոլիս Հայրենիքին աշխատակցեցաւ Մանկական Հոգիներ վերնագրով զմայլելի փափկութեամբ ու կրկնող հոգեբանութեամբ էջերով, որոնք, իր հսկողութեան տակ հայերէնի թարգմանուած, պիտի մնան հայ գրականութեան մէջ:

Մեծ գրագէտ մը կար իր մէջ որ անշուշտ շատ գեղեցիկ էջեր արտադրեց, այլ որ ժամանակ չունեցաւ իր լըրութեանը մէջ ի յայտ գալու: Անողոք հիւանդութիւն մը, որ ներել չի գիտեր, իր ձեռքը անոր վրայ զրած էր արդէն, երբոր ան արիօղէն կը ճգնէր իր ցեղին համար: Աւելի ամուր հոգի մը՝ երբեք իրեն պատեան չունեցաւ աւելի փափուկ ու զաղփաղփուն մարմին մը: Տարօրէն հակադրութիւն մըն էր ասիկա: Ծածկանունը զոր առած էր, իրաւցընէ իր հոգիին յատկանիշներէն կը բղխէր. — պողպատի արութեամբ ու տոկունութեամբ լեցուն էր ան: Ազգային շարժման մէջ, անխնայ ու անհաշիւ մաքառումին կողմնակիցն էր, առանց վհատելու, ու առանց կեցելու, աչքերն յառած դէպի հեռուոր մեծ նպատակը:

Հիմակ ա'լ յոյսերը մեզի հետ չունի բաժնելիք, մեր մեծ ու աղւոր բարեկամը: Եզիպտոսէն, ուր գացած էր իր ցարը քնացնելու, խանդակաթ ձեռքեր, զինքը ատին Պոլիս տարին, ուսկից ահա կը հասնի մեզ իր մահուան լուրը: Իր վերջին ճիգը՝ մեզի համար եղաւ նորէն: Ռե-

վիտ սե Ռեվիտի իր թերթին ճակատը յուլիս 15ի և օգոստոս 1 թիւերուն մէջ կը հրատարակէր իրմէ նշանաւոր ուսումնասիրութիւն մը, «Թիւրքիան կրնա՞յ ապրիլ»: Բարեկամներ, որոնք ամերիկեան ամսաթերթերու մէջ այդ յօդուածներուն ջերմ գովեստը կարգացրեր էին, մեզի կը յանձնարարէին զայն, առանց տարակուսելու որ հայրենակից մըն էր անոնց անձանօթ հեղինակը:

Անոնցմէ, որոնց հետ լաւ կոխը կոտուած ենք, ահա մէկն ալ որ կ'իյնայ — ու էն թանկագիններէն, անվոխարինելիներէն մին: Ու անոր կակիժը մեզի հետ պիտի ըլլայ միշտ: **Լ. ԶԱՐԹՈՒՄԵԱՆ**

**ԼՈՒՐԵՐ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՅՈՒԹԻՒՆԸ.** Անկող զիպրերու գործերը Հայաստանէն կը շարունակէն հասնիլ: Ահա շատիկ քսողաժք մը անգլիական մամուլիկ ձեռագիրներէն: «Չիեռած հայեր առասպալակ հողէն Արաշկերտ մտած ըլլալով Բիւրտերը կանոնաւոր գօրքերուն աբակ-ցոռքեամբը հիմնադրատակ քանդեցին խոստոր գեղը, որ լռաստորչական և կարողիկ հայոց մէջ մէկ եկեղեցի ունէր: Ավտող գեղը աւարի տուրիս եւ 300 հայ շարքեցիս: Եւսանապիս աւարի տուրիս Արաշկերտի ուրիշ գեղերն ալ, քեկ ո'չ ասուք, ո'չ խոստոր ո'չ և է յարարեւրաքիւն ունէին առասպալակ սահմանադրիկէն եկող աւարակներուն հետ: Պայադիտի կասաւարիչը շեղով այս զիպրերը երկու օր ետքը աղետիկ վայրը եկաւ, ու արգիւց աւերուելիս ու աւարիկ շարունակուրիւնը: Բիւրտերը աւարի տուրիս Սասունի կիլիկիզան գեղը որ ահեղապիս վնասուած էր 94ի մեծ կոտորածէն: Մոռի կասաւարիչը հասնելով կրցաւ աւերուած աւարիկ 500 սխար գտնել և գեղացիներուն վերադարձնել: Հայոց պատրիարքը յիշատակագիր մը տալով Դրան յանցաւորներուն պատժուիլը պահանջեց և այսպիսի զիպրերու կրկնուրիւնը արգիւցելու տնօրինուրիւններ: Վան Բիւրտերը վայելելով զիւնուրական իշխանաւորական սպանուպաւնուրիւնը կը շարունակէն հարստահարել հայերը: Բարուի կասաւարիչը Հայոց որբակոցը գոցեց: Տարապիքի 70 հայ բանտարկուած էր: Չերուշ 15ի լափ 10ի և 12 տարեկան տղաք բանտը զրոնցան, հայերէն երգեր ունեւանուրիւն համար, ու թաղական խորհուրդն ալ բանտարկուեցաւ, սղքաւ Հայոց և պատուած ըլլալուն համար:

**ՆՈՐ ԿԵԱՆՔ**

**ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ**

**ՆՈՐ ԿԵԱՆՔԻՔ** պիտի շարունակէ հրատարակուիլ 1900 Յունուար 1էն, նոյն ծրագրով և նոյն պարամներով: Մեր բաժանորդներէն կը ինչորնք անյապաղ ծանուցանել մեզ իրենց բաժանորդագրութեան վերանորոգումը: **ՀԱՍՅԷ**

L. FRANK,  
32, CHESTERTON ROAD,  
(ENGLAND) LONDON, W.

ՀԱՅ ԿԵՆՏՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ազգին դեմ 177  
 Աղօթքը — Ե. Օ. 371  
 Աներկիկան Պորտի կրթական զործը Հայոց մեջ — Լ. Զարբուզեան 122  
 Անարդիա Գոյեճը 157  
 Անգլիական մատուցը Նուշար փաշայի մասին 37  
 Անիի աշերակները — Տիկին Սրանիայաս Մեօնիե 357  
 Անոնք եւ մերիկները — Լ. Զարբուզեան 113  
 Ասիական թիւրքիոյ երկարաշիւները 235  
 Ասիական թիւրքիոյ մեջ մանրորդներու մը եօթը — Լ. Զարբուզեան 11  
 Արեւելեան խնդիրը 1898ին 1  
 Արիւնի յոգանքը — Զապէլ Յովնանեան 356  
 Արիւնիկն քերթածը — Արամ Միրզա 279  
 Արտաքսուս մը — 234

Երկու երևոյթները — Արփիար Արփիարեան 307, 322, 343  
 Երկու թիւքը 159  
 Երկու ծայրերը 161  
 Եւրոպական շահերը թիւրքիոյ մեջ 127  
 Եւրոպական քաղաքականութիւնը 314  
 Եփրատի հովիտը 283

Զէյթունցի տղայ մը 333

Էջմիածնի վանքը — Տիկին Սրանիայաս Մեօնիե 347

Թիւրքիա եւ Եւրոպա 271  
 Թիւրքիոյ բարեկարգումը 17, 49, 65  
 Թիւրքիոյ կացութիւնը 366

Ժամանակակից պատմութեան կէտք.  
 Հրոսակի մը Յիշատակներէն — Արփիար Արփիարեան 2, 20, 54, 74, 89, 104, 140, 154  
 Պատրիարքական ընտրութիւն մը — Արփիար Արփիարեան 375

Ժամանց  
 Թիւրքիականութիւն մը — Սկեպտիկ 142  
 Լոռաքանութիւն մը — Սկեպտիկ 174  
 Նախախնամական հանդիպումը — Սկեպտիկ 204

Ապագայ կեանքը. Պարտութիւն մը — Սկեպտիկ 222  
 Օրմանեանի երգը — Վանքում 239  
 Քիչ մը խղճմանը — Սկեպտիկ 334  
 Ժողովրդին ինքնօգնութիւնը 327  
 Իսլամներուն նոր սուպարեզ 301  
 Լաֆոնդին չարափոխեալ — Արամ Ճիւ Չղջիկն ու երկու արիւնները 203  
 Երկու ցուշերը եւ գորտը 235  
 Լէշնի բանար — Ե. Օ. 354  
 Լոյսեր 32, 80, 96, 112, 128, 160, 176, 192, 208, 224, 240, 255, 272, 288, 304, 320, 336, 352, 368, 384

Խաղաղութեան համաժողովը 159, 168  
 Խաղաղութեան համաժողովը եւ Հայերը 97  
 Խաչագողները — Լ. Զարբուզեան 286

Կես պատրիարքը 302  
 Կ. Պոլսոյ մտաւորական շարժումը — Արփիար Արփիարեան 295

Հայասեր կնիչ մը մանր 220  
 Հայաստանի կացութիւնը 58, 191, 203, 220, 248  
 Հայաստանի համար — Իւրպէն Կօիե 317  
 Հայաստանի տնտեսական կացութիւնը 147, 172, 201, 195, 210, 228, 243, 265, 275

Հայերը եւ Ռուսիա 81, 98  
 Հայը Նուշար փաշայի մեջ — Լ. Զարբուզեան 41  
 Հայիկական խնդիրը Եւրոպայի առջև — Իւրպէն Կօիե 255  
 Հայն ու Հրեան 209  
 Հայոց պատրիարքարանը եւ Սրբանոցները — Լ. Զարբուզեան 109

Հայ տառապանքէն — Սուրեն Պարբեռեան  
 Տէր պապան 125  
 Պոռտ մը ջոճը 137  
 Փրկչութեան բանակը 149  
 Տէրը 169

Ագասները 339  
 Ֆադրոշածները 374  
 Հայրենասեր մը — Ա. Տ. 47  
 Հայրենի հողը — Լ. Զարրուճեան 369  
 Հայրենիքին պատիւ — Փիւնիկ 67  
 Հայրենիքի վերջուշուճներ — Արմեն Զարպարեան  
 Գիշերապանը 102  
 Հանկուտեան 120  
 Հոգեմակդիստ Լոնտոն Երզնայի փաշայի յիշատակին —  
 Լ. Զարրուճեան 57  
 Մակարայեցոց վանքը 108  
 Մարտիկ աղա — Պարոյր 43, 60, 76, 91  
 Մեհաշորի մը ետնակները — Մեհաշոր 233, 233,  
 250, 251, 300  
 «Միշրերբի Հերբա» եւ 136  
 Միջագոյնի քաղաքականութիւնը 329  
 Մարի անօրոշրիւնը 305  
 Յեղափոխութեան Մակարոյճները  
 Խմբագիրը — Վահրամ 6  
 Որ մեկը հերոս — Վահրամ 22  
 Նախկին գործիչը — Երօտ 350  
 Կեղծ քառուր — Երօտ 363  
 Հակայեղափոխականը — Երօտ 381  
 Նախանայերը — Արթուր 353  
 Ներքին բարեկարգութիւն 289  
 Նուշար փաշա 26, 33  
 Նուշար փաշա — Օ. տը Պովից 26, Էտաշրտ Տայսե 27,  
 «Թան» 31, Մ. տը Վոկիշե 31  
 Ոսկի հորթին առջև — Լ. Զարրուճեան 337  
 Ռ՝վ կը խարեն 193  
 Ուրուշակները 133

Պաղտատի երկարուշիւն 241  
 Պատրիարքական տաղեայր 318  
 Պատրիարքարանը 285  
 Պատրիարքարանը և պաշտօնը 237  
 Պատրիարքը պաշտօնին վրայ 335  
 Պատրիարքին վերադարձը 321  
 Պատրիարք ու վարչապետ 225  
 Պարսկաստան և Հայերը — Վ. Շանեկի 9, 83, 100,  
 115, 134, 249  
 Պետրոս մեծ և Հայերը — Համառօտ քաղաքական տե-  
 ստքիւն հայ-ուշասական յարաբերութեան — Ար-  
 շակ Բաթթի 69  
 Ռուշիա և Թիւրքիա 15  
 Ռուշիոյ ծայրայեղ սպառնալիւնութիւնը — Սրբ Լիւնդրե Սիւ-  
 մըն 252  
 Ռուշու պաշտօնական գաղտնի տեղեկագիր մը Կովկասի  
 մասին 129, 145, 162  
 Սգաշար երկիր մըն ալ — Արփիար Արփիարեան 111  
 Սոշրանին գաղտնի դիւանագիտութիւնը — Բիւր Բիւրեան  
 186  
 Վտանգ մը հայ վաճառականութեան համար 218  
 Տիգրան Երկար — Լ. Զարրուճեան 383  
 Փոքր — Ասիա 182, 198, 215  
 Օրենքին կտուանը 273  
 Օրոշան կեանքը — Հրազդան 52, 86, 117, 164,  
 259, 281, 360  
 Օրոշան քաղաքականութիւնը — Լ. Զարրուճեան 64, 80  
 Ֆրանսա Արեւելքի մէջ 257  
 Ֆրանսա Արեւելքի մէջ — Էդիկե Լամի 291, 310







